

3093

40

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ԶՐՈՒՅՑԸ

ԱՇԵՐԻԿԱՆ ԱՌԱՋԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

3К33

ԱՐԿԱՊԽՎՅՈՒՆ «ԶԱԿԿՆԻԳԱ»

**

1927

**

L-47

1928 Խ 33
14 JUN 2005
20 NOV 2009

Հա Ա
Հա 2498
3K33
Հ-47

Պողեսամբ բոլոր յեւլրներ, միացե՛մ.

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ԶՐՈՒՅՑՑՈՒ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

(1927թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ին)

ԹԱՐԳԱ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ



ՀՐԱՍԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԶԱԿԿՆԻԳԱ»
ԹՐԱՋԻՒՆ—1927

05 ԽԱ. Հ.Բ

3093

Беседа тов. Сталина
с первой американской
рабочей делегацией.
Пер. под ред. А. Вартаняна

«ЗАКНИГА»



59827-66

Թիֆլիս, ճ. Տ. Գ. Խ. Պոլիգրաֆարեստի 4-րդ տպ., Պուշկ. փող № 3
Գրասենյ. № 1686. Տիքած 1500.

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ՅԵՎ
ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՅԵՎ

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱԽԱՆՆԵՐԸ

Առաջին հարցը ի՞նչ նոր սկզբունքներ գործնականապես ավելացրին մարքսիզմին կենինն ու կոմկուսակցությունը։ Արդյոք ձի՛շտ կլինի ասել, թե կենինը հավատում էր «հեղափոխական սուբդագործող ուժին», մինչդեռ Մարքսն ավելի հակած եր սպասելու, վոր անտեսական ուժերի գարզացումը ամենալարձր (կուլմինացիոն) աստիճանին հասնի:

Պատասխան։—Ցև կործում եմ, կենինը, «վոչ մի նոր սկզբունք» չի «ավելացրել» մարքսիզմին, ինչպես նաև կենինը չի վերացրել մարքսիզմի «հին» սկզբունքներից և վոչ մեկը։

Կենինը յեղել ե և մնում ե Մարքսի ու Ենգելսի ամենահամարիմ և հետեւզական աշակերտը, վոր ամբողջովին ու լիովին հիմնվում եր մարքսիզմի սկզբունքների վրա։ Սակայն կենինը Մարքսի ու Ենգելսի ուսմունքի միայն սոսկ կատարողը չեր։ Նա միենույն ժամանակ նաև Մարքսի ու Ենգելսի ուսմունքի շարունակողն եր։ Ի՞նչ և նշանակում այդ դա նշանակում է,

թե Մարքսի, Ենգելսի ուսմունքը առաջ տանելով, գառակարգային պայքարի նոր պայմաններում Լենինը մարքովմի զանձարանը մտցրեց նոր բան, համեմատած այն բոլորի հետ, ինչ տվել ելին Մարքսն ու Ենգելսը, համեմատած այն բոլորի հետ, ինչ կարող եր տրվել մինչ-խմաբերխալիստական կապիտալիզմի շրջանում, և այն ել մարքսիզմի զանձարանը Լենինի կողմից մտցրած այդ նորը ամբողջովին ու լիովին հիմնը-վում և Մարքսի և Ենգելսի տված սկզբունքների վրա: Հենց այս մտքով ել ասվում է մեղանում, թե լենինիզմը խմաբերխալիզմի և պրոլետական հեղափոխությունների դարաշրջանի մարքովմն ե: Այս մի քանի հարցեր, վորոնց շրջանում Լենինը տվել և նոր բան, ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը:

Առաջին, մոնուպուլիստական (մենաշրջանի առ հայել) կապիտալիզմի ու իմպերիալիզմի, վորոպես կապիտալիզմի նոր փուլի, հարցը լր: Մարքսն ու Ենգելսը ապրում ելին մինչ-մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության շրջանում, կապիտալիզմի սահուն եվլյուցիացման և նրան վողջ յերկրագնդում «խաղաղ» տարածման շրջանում: Այդ հին փուլը վերջացավ XIX-րդ դարու վերջերին և XX-րդ դարու սկզբներին, յերբ Մարքսն ու Ենգելսը արդեն կենդանի չելին: Հասկանալի յե, վոր Մարքսն ու Ենգելսը կարող ելին միայն զլիսի ընկնել կապիտալիզմի զարգացման այն նոր սպայմանների նկատմամբ, վորոնք վրա հասան կապիտալիզմի նոր փուլի հետ, մի փուլի, վորը յեկատ փոխարինելու հին փուլին: Խմաբերխալիստական, մոնոպոլիստական զարգացման փուլի հետ, յերբ կապիտա-

լիզմի սահուն եվլյուցիացումը փոխվեց կապիտալիզմի թոփքաձե, կատաստրոֆային զարգացմամբ, յերբ կապիտալիզմի անհամաշափ զարգացումն ու հակառա-թյունները հանգես յեկան առանձին թափով, յերբ սպասման և կապիտալի արտահանության շուկայի համար մզգով կոխվեց զարգացման խիտ անհամաշափության պայմաններում՝ անխուսափելի զարձրեց պարերական իմպերիալիստական պատերազմները՝ աշխարհն ու ազգեցության շրջանները պարբերաբար վերաբաժնելու համար: Լենինի մատուցած ծառայությունը, հետևապես լենինի մտցրած նորը այստեղ այն, և, վոր նա տվեց խմաբերխալիզմի, վորպես կապիտալիզմի վերջին փուլի, հիմնավորված մարքսիստական վերլուծումն, բաց անլեռով նրա խոցերը և նրա անխուսափելի կործանման պայմանները: Այդ վերլուծության հիմքի վրա ծագեց լենինի հայմանի դրությունը, թե իմպե-րիալիզմի պայմաններում սոցիալիզմի հազարանկը հնարավոր ե՝ առանձին, առանձին վերցրած կապիտա-լիստական յերկրներում:

Յերկրորդ պրուլետարիատի դիկտատուրայի հիմնական գաղափարը, վորպես պրոլետարիատի քա-ղաքական տիրապետության և վորպես կապիտալի իշխանությունը բռնի կերպով տապալելու մեթոդ, ավելին Մարքսն ու Ենգելսը Այս բնուպավառում լենինի տված նորն այն և, վոր ա) նա հայտաբերեց Խորհրդային իշխանությունը, վորպես պրոլետարիատի դիկտատու-րայի պետական ձե, ոգտագործելով վրա համար Պարբերի կոմմունայի և ոռուսական հեղափոխության փորձը. բ) վոր նա բաց արագ պրոլետարիատի դիկտատուրայի

փորմուլայի փակագծերը, աչքի առաջ ունենալով պրո-
լետարիատի գաշնակիցների խնդիրը, բնորսշելով պրո-
լետարիատի զիկատատուրան, վորպես առանձին ձև՝ պրո-
լետարիատի զասակարգային միության վոչ-ովըլետատ-
րական գասակարգերի (զյուղացիությունը և այլն) շա-
հազործվող մասսաների հետ, պրոլետարիատի, վոր հան-
դիսանում և զեկավար և վոչ-պրոլետարական մաս-
սաների, վորոնք զեկավարվող են. զ) նա առանձ-
նապես շեշտեց այն փաստը, թե պրոլետարիատի
զիկատատուրան հանդիսանում և գասակարգային հաստ-
րակության մեջ գեմոկրատիայի բարձրագույն տիպը,
պրոլետարական գեմոկրատիայի ձեւ, վորն արտահայ-
տում և մեծամասնության (շահագործվողների) շահերը;
վորպես հակակշեռ կապիտալիստական գեմոկրատիայի,
վորն արտահայտում և փոքրամասնության (շահագոր-
ծողների) շահերը:

Յերբորդ, սոցիոլիգմի հաջող շենտրա-
րության ձեւը ի ու միջների հարցը՝ պրո-
լետարիատի զիկատատուրայի ժամանակա-
շրջանում, կապիտալիզմից դեպի սոցիո-
լիզմն անցնելու ժամանակաշրջանում, կա-
պիտալիստական պետությունները շեր-
ջապատճած յերկրում։ Արքան ու ենթելով պրո-
լետարիատի զիկատատուրայի ժամանակաշրջանին նա-
յուն ելին, վորպես ավելի կամ քիչ տեսող հեղափոխա-
կան քաղխումներով և քաղաքացիական կորիֆերով լի մի
ժամանակաշրջանի, վորի բնիթացքում՝ պրոլետարիատը
գոնզելով իշխանության վրություն՝ ձևոք և առնում տըն-
տեսական, քաղաքական կուլտուրական և կաղմա-
կերպչական բնույթ ունեցող միջոցներ, վորոնք ան-

հրաժեշտ են՝ կապիտալիստական հին հասարակության
փոխարեն՝ առանց գասակարգերի, առանց պետության,
այցիալիստական նոր հասարակություն ստեղծելու հա-
մար։ Լենինը ամբողջապես կանոնած եր Մարքսի և
Ենգելսի այս հիմնական ոկրունքների վրա։ Այդ բնա-
գավառում Լենինի նորը այն է, վոր նա ա) իմպե-
րիալիստական պետություններով շրջապատված պրո-
լետարիատի զիկատատուրայի յերկրում սոցիալիստա-
կան հասարակության լրիվ կառուցման հնարավորու-
թյունը հիմնավորեց պայմանով, վոր այդ յերկրուը չը-
կնեղիվի շրջապատող կապիտալիստական պետություն-
ների սազմական միջամտությամբ. բ) նա կոնկրետ
կերպով նշեց տնտեսական քաղաքականության ուղի-
ները («Տնտեսական նոր քաղաքականություն»), վորոնց
սպնությամբ պրոլետարիատը իր ձեռքին ունենալով
անտեսական հրամայող բարձրունքները (արդյունա-
գործությունը, հողը, տրանսպորտը, բանկերը ևայլն),
շաղկապում և սոցիալիզացիայի յենթարկված ինդուս-
տրիան վյուղատնտեսության հետ («Ինդուստրիայի
միջկան զյուղացիական տնտեսության հետ») և այդպի-
սով ժողովրդական վող տնտեսությունը տանում գեպի
սոցիալիզմ. գ) նա գծեց վյուղացիական հիմնական մաս-
սաներին տարիանարար սոցիալիստական շինարա-
րության հունին մուտեցնելու ու նրա մեջ մտցնելու
կոնկրետ ուղիները՝ կոսպերացիայի միջոցով, վոր
պրոլետարիատի զիկատատուրայի ձեռքում զառնում և
մի ամենախոշոր միջոց՝ զյուղացիական մանր անտե-
սությունը վերակառուցելու և սոցիալիզմի վոկով վե-
րագասատիւրակելու զյուղացիության հիմնական զանդ-
փածներին։

Զորբորդ, պլուղեատարիատի գերիշխանության (հեղեմոնիայի) հարցը հեղափոխության մեջ, ամեն մի ժողովրդական հեղափոխության լինի նա և զափոխությունն ընդգեմ ցարիզմի, թէ և հեղափոխությունն ընդգեմ կապիտալիզմի: Մարքուլ և և ենգելսը տվելեն պրոլետարական գերիշխանության նիմնական ուրվագծին երը միայն էնինի մացլած նորը այստեղ այն է, վոր նա այդ ուրվագծերը զարգացրեց ու վերածեց պլուղեատարիատի գերիշխանության հոյակապ մի սխառեմի, քաղաքի և զյուղի աշխատավոր մասսաներին պլուղեատարիատի կողմից զեկավարելու հոյակապ սխառեմի՝ վոչ միայն ցարիզմը և կապիտալիզմը տապակելու գործում, այլև սոցիալիստական շինարարության գործում՝ պլուղեատարիատի դիկտատուրայի որով:

Հայտնի յե, վոր պլուղեատարիատի գերիշխանության գաղափարը՝ շնորհիվ էնինի և նրա կուսակցության վարպետորեն կիրառվեց Ռուսաստանում: Ի միջի այլոց, սրանով և բացատրվում այն փաստը, վոր Ռուսաստանում՝ հեղափոխությունը հանձնեց իշխանությունը պլուղեատարիատի ձեռքը: Առաջներում սովորաբար այսպես եր լինում. բանվորները հեղափոխության ժամանակ կովում եյին պատճենների վրա, նրանք եյին արյուն թափում, նրանք եյին տապալում հինը, իսկ իշխանությունը անցնում եր բուրժուաների ձեռքը, վորոնք հասու շահագործում և հարստանում եյին բանվորներին: Այդպես և յեղել Անգլիայում և Ֆրանսիայում: Այդպես յեղավ և Գերմանիայում: Մեզ մոտ՝ Ռուսաստանում՝ գործն այլ ընթացք ստացավ: Մեզ մոտ բանվորները հեղափոխության լոկ

հարվածով ուժը չեղան: Էլենելով հեղափոխության հարվածով ուժը, ուսւ պլուղեատարիատը միենության ժամանակ աշխատեց զառնալ քաղաքի քաղաքի և կյանքի բոլոր շահագործվող զանգվածների գերիշխողն ու քաղաքական ղեկավարը, իր շուրջը համախմբելով, խլելով նրանց բուրժուազիայից և քաղաքականական մեկուսացնելով բուրժուազիային: Յեվ գառնալով շահագործվող մասսանների գերիշխողը, ուսւ պլուղեատարիատը ամբողջ ժամանակ կովեց, վորպեսզի խլե իշխանությունը և ոգտագործեալու այն իր սեփական շահերի համար՝ ընդդեմ բուրժուազիայի և կապիտալիզմի: Հենց գրանով ել բացարվում է այն, վոր հեղափոխության յուրաքանչյուր հզոր յելույթը Ռուսաստանում, թէ 1905-ի հոկտեմբերին և թէ 1917-ի փետրվարին, հանգես բերեց բանվորական պատգամավորների Խորհուրդները, վորպես իշխանության նոր ապարատի սազմեր, վորոնք կոչված եյին ձնշելու բուրժուազիային, վորպես հակակշելու բուրժուական պարլամենտի, իշխանության հին ապարատի, վոր կոչված եր ձնշելու պլուղեատարիատին: Բուրժուազիան յերկու անգամ փորձեց մեղանում վերականգնել բուրժուական պարլամենտը և վերջ տալ Խորհուրդներին—1917 թ. ոգոստոսին, «Շախապարլամենտի» որերին, բուշելիների կողմից իշխանությունը գրավելուց դեռ առաջ և 1918 թ. հունվարին «հիմնադիր ժողովի» որերին՝ պլուղեատարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո, և ամեն անգամ ել պարտություն կրեց: Ինչու: Վորովհետեւ բուրժուազիան արգեն քաղաքականապես մեկուսացված եր, և աշխատավորների միլիոննավոր մասսանները պլուղեատարիատին համարում եյին հեղափոխության միակ զեկավարը, իսկ

Ասրհուրդները արգեն փորձվել և ստուգվել ենին մտասահների կողմից, փորպես իրենց բանվորական իշխանությունը, փորը բուրժուական պարլամենտով փոխարինելը կնշանակելը պլոտինարիատի համար իքնասպանություն գործել: Այդ պատճառով ել զարմանալի չե, փոր բուրժուական պարլամենտարիզմը չպատվաստվեց մեղ մոտ: Ահա թե ինչն է հեղափոխությունը Ռուսաստանում հանձնեց իշխանությունը պլոտինարիատին: Ահա հեղափոխության մեջ պլոտինարիատի գերիշխանության լինիյան սիստեմի իրագործման արդյունքները:

Հինգերորդ, ազգային-գոռոտ թային հարցը: Մարքսը և Ենդելը իրենց ժամանակին վերլուծելով իրանդիայի, Հնդկաստանի և Չինաստանի, Կենտրոնական Յեվրոպայի յերկրների, Ահաստանի և Հունգարիայի անցքերը, տվին հիմնական-յելակիտ գաղափարները ազգային-գաղութային հարցի վերաբերմամբ: Լենինը յուր աշխատությունների մեջ հիմնվել է այդ գաղափարների վրա: Այդ բնագավառում լենինի տված նորը այն ե, վոր նու ա) ամփոփեց այդ գաղափարները և վերածեց իմպերիալիզմի գաղափարների ազգային-գաղութային հեղափոխությունների մասին յեղած հայացքների մի հոյակալ սիստեմի: բ) ազգային-գաղութային հարցը կատեց իմպերիալիզմի առաջարկան հարցի համար, հայտարարեց ազգային-գաղութային հարցը միջազգային պլոտինարական հեղափոխության ընդհանուր հարցի բարկացուցիչ մի մասը:

Վերջապես՝ պլոտինարիատի կուսակցության հարցը: Մարքսը և Ենդելը ավելի կուսակցությանը վերաբերող հիմնական ուրվագծերը, վոր-

պես պլոտինարիատի առաջապահ ջոկատի, առանց վորի (կուսակցության) պլոտինարիատը չի կարող ձեռքբերել իր ազատագրությունը՝ վոչ իշխանությունը դրավելու և վոչ ել կապիտալիստական հասարակություն վերափոխելու խմասով: Լենինի մոցրած նորը այս բնագավառում այն է, վոր նա զարգացրեց այդ ուրվագծերը՝ համաձայն պլոտինարիատի կովի նոր պայմանների իմպերիալիզմի ժամանակաշրջանում, ապացուցելով, վոր ա) կուսակցությունը պլոտինարիատի զասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է, համեմատած նրա կազմակերպության այլ ձևերի հետ (պրոֆմիությունների, կոսովերացիայի, պետական կազմակերպության), վորոնց աշխատանքը կոչված է նա ընդհանրացնելու և զեկավարելու: բ) վոր պլոտինարիատի զիկատառության կարելի յե իրականացնել միայն կուսակցության միջոցով, վորպես նրա առաջնորդող ուժի: գ) վոր պլոտինարիատի զիկատառության կարող է լրիվ լինել միայն այն զեպում, յերբ նրան զեկավարում է մեկ կուսակցություն, —կոմմունիստների կուսակցությունը, —վորը չի բաժանում և չզետք ե բաժանի իշխանությունը ուրիշ կուսակցությունների հետ. դ) վոր առանց յերկաթյա զիսցիալինային կուսակցության մեջ չեն կարող իրականացվել պլոտինարիատի զիկատառության ինդիբները՝ ճնշելու շահագործողներին և վերակառուցելու գասակարգային հասարակությունը, վորպես սոցիալիստական հասարակություն: Ահա հիմնական զեկավարի այն նորը, վոր իր աշխատառությունների մեջ տվել է լենինը, կոնկրետացնելով և առաջ տանելով Մարքսի ուսմունքը իմպերիալիզմի շրջանում՝ պլոտինարիատի պայքարի նոր պայմանների համեմատ:

Այդ պատճառով ել մեզանում ասում են, թե լինինիզմը խմակրիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների գարաջրջանի մարքսիզմն և Սրանից արդեն պարզ ե, վոր լինինիզմը վհչ կարելի յե բաժանել մարքսիզմից, վհչ ել՝ ևս առավել՝ հակադրել մարքսիզմին:

Պատվիրակության հարցի մեջ ասված ե այսուհետեւ. «Արդյոք ճիշտ կինի ասել, թե լինինը հավատում եր «հեղափոխության ստեղծագործող ուժին», մինչեւ Մարքսն ավելի հակված եր սպասելու, վոր տնտեսական ուժերի գարգացումը ամենաբարձր աստիճանին հասնի»: Յես կարծում եմ միանգամայն սխալ կիներ այդպես ասելլ: Յես կարծում եմ, վոր ամեն ժողովրդական հեղափոխություն, յեթե նա հիրավի ժողովրդական հեղափոխություն ե, հանգիսանում և «ըստեղծագործող հեղափոխություն», վորովհետեւ նա ջարդում ե հին իրավակարպը և ստեղծում, առաջացնում ե նորը: Իհարկե, ստեղծագործական վոչինչ չի կարող լինել, թող ներվի ասել, այնպիսի «հեղափոխությունների» մեջ, վորպիսիք տեղի յեն ունենում, ասենք, Ալբանիայում մի ցեղի մյուսի դեմ հարուցած խաղալիքային «ապատամբությունների» ձևով: Սակայն նման խաղալիքային «ապատամբությունները» յերբեք մարքսիստների կողմից հեղափոխություն չեն համարվել: Պարզ ե, վոր իսուքը այդպիսի ապատամբությունների մասին չե, այլ իսկական մասսայական ժողովրդական հեղափոխության, վոր ճնշված դասակարգերին բարձրացնում ե ճնշող դասակարգերի վեմ: Իսկ այդ տեսակ հեղափոխությունը չի կարող չինել «ստեղծագործող»: Մարքսն ու լինինը այդպիսի և միմիայն

այդպիսի հեղափոխության կողմանակից եյին: Հնդ սմէն հասկանալի յե, վոր այդպիսի հեղափոխությունը չի կարող աւաջ գալ ամեն պայմաններում, վոր նա կարող ե բոնկվել միայն տնտեսական ու քաղաքական կարգերի վորոշ բարենպաստ պայմաններում:

Յերկրորդ հարցը կարելի յե արդյոք տանը, թե կոմիտում վերահսկողություն ե կառարում կառավարության վրա:

Պատասխան: Բոլորը կախված ե նրանից, թե ինչպես պիտք ե հասկանալ վերահսկողությունը. կապիտալիստական յերկրներում վերահսկողությունը հասկացվում և մի քիչ յուրահատուկ ձևով: Յես գիտեմ, վոր մի շարք կապիտալիստական կառավարություններ յենթարկվում են վերահսկողության խոշորագույն բանկերի կողմից, չնայած դեմոկրատական պարամենտների գոյությանը այդ յերկրներում: Պարլամենտները հավատացնում են, թե իրենք են վերահսկողության յենթարկում կառավարությունը: Իսկ իրականում դուքս ե գալիս, վոր խոշոր ֆինանսական կոնսորցիոններն են նախորդում կառավարությունների կազմը և կոնտրոլի յենթարկում նրանց գործողությունները: Ո՞ւմ հայոնի չե արդյոք, վոր կապիտալիստական պիտություններից և վհչ մեկում չի կարող կարինետ կազմվել՝ հակառակ ֆինանսական խոշոր տուղերի կամքի: բավական և միայն գործ դնել ֆինանսական մի ճնշում, վորպեսզի շշմած մինիստրները թոշեն իրենց պաշտոններից: Դա յե կառավարությունների վրա ունեցած բանկերի իրական վերահսկողությունը՝ հակառակ պարամենտների յերևակայական

վերահսկողության: Յեթե խոսքն այդ տեսակ վերահսկողության մասին ե, այդ գեղքում յես պետք է հայտարարեմ, վոր մեզանում անհետակայելի յե «գրամի պարկի» վերահսկողությունը կառավարության վրա և միանգամայն անհնարին ե զա, թեկուզ այն պատճառով, վոր բանկերը մեզանում վաղուց ազգայնացված են, իսկ «գրամի պարկերը» գուրս են շաբաթված ԽՍՀՄ-ից:

Գուցե պատգամավորությունն ուզում եր հարցնել վոչ թե վերահսկողության, այլ կառավարության վերաբերմամբ կուսակցության ունեցած զեկավարության մասին: Յեթե պատգամավորությունն ուզում եր այդ մասին հարցնել, այն ժամանակ յես կտում այս, մեզանում կուսակցությունը զեկավարում և կառավարությանը: Իսկ այդ զեկավարությունը աջող վում և այն պատճառով, վոր կուսակցությունը վայելում և բանվորների ու աշխատավորության մեծամասնության վասահությունը առհասարակ և կուսակցությունն իրավունք ունի զեկավարել կառավարությանը՝ մեծամասնության անունից: Ինչումն և արահաճայտվում ԽՍՀՄ բանվորական կուսակցության, ԽՍՀՄ կոմմունիստական կուսակցության զեկավարությունը կառավարության նկատմամբ:

Նախ և առաջ նրանում, վոր մեր յերկրի պետական աշխատանքի հիմնական պաշտոններում կոմկուսը աշխատում է Խորհուրդների ու նրանց համագումարների միջոցով անցկացնել իր թեկնածուներին, իր լավագույն աշխատաղներին, վորոնք նվիրված են պրոլետարիատի գործին և պատրաստ են ծառայելու նրան

հավատով և ձշմարտությամբ: Դա կոմկուսին հաջողվում է մեծ մասամբ, վորովհետեւ բանվորներն ու գյուղացիները կուսակցությանը վասահությամբ են վերաբերվում: Յեկ սա պատահականություն չե, վոր իշխանության մարմինների զեկավարները կոմմունիստներն են հանդիսանում, և վոր նրանք՝ այդ զեկավարները՝ յերկրում ահազին հեղինակություն են վայելում:

Յերկրորդ, նրանում, վոր կուսակցությունը ստուգում է վարչական մարմինների աշխատանքը, իշխանության մարմինների աշխատանքը, ուղղելով սխալներն ու թերությունները, վորպիսիք առհասարակ չեն կարող չլինել, ոգնելով նրանց՝ անցկացնելու կառավարության վորոշումները և աշխատելով ապահովել նրանց՝ մասսաների աջակցությամբ, ըստ վորում վոչ մի կարեօր վորոշում չեն ընդունում նրանք, առանց կուսակցության համապատասխան ցուցումների:

Յերրորդ, նրանում, վոր իշխանության այս կոմմ այն որպանների աշխատանքի ծրագիրը մշակելիս, լինի այդ արդյունագործության թե գյուղատնտեսության բնագավառում, կամ առեստի և կուլտուրական շինարարության բնագավառում, կուսակցությունն ընդհանուր զեկավար ցուցումներ և տալիս, վորոնք վորոշում են այդ որգանների աշխատանքի բնույթը և ուղղությունը՝ ծրագրների գործադրության ժամանակամիջոցում:

Բուրժուական մամուլը սովորաբար գարմանք և արտահայտում կառավարության գործերի մեջ կուսակցության այդպիսի «միջամտության» նկատմամբ: Սակայն այդ գարմանքը միանգամայն կեզծ է: Հայոնի յե, վոր կուսակցության յերկրներում ճիշտ նույն-



ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ազգային
ԿՐՈՆԱԿԱՐՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԿADEMİCİ
SOSİALİSTİCİ
DÜŞTƏRƏK

պես պիտական գործերի մեջ խառնվում են բուրժուատկան կուսակցություններն ու ղեկավարում կառավարությանը, ըստ վրում այնակեզ ղեկավարությունը կինտրոնանում և նեղ շրջանի մարդկանց ձեռքում, վորոնք այսպես թե այնպես կապված են խոշոր բանկերի հետ, և վորոնք՝ գրա շնորհիվ՝ աշխատում են թաքցնել իրենց գերը: Ո՞ւմ հայտնի չե, վոր Անգլիայի կամ այլ կապիտալիստական յերկրների յուրաքանչյուր բուրժուական կուսակցության մեջ գոյություն ունեն գաղտնի կարինեաներ՝ բազկացած մի քանի մարդկանցից, վորոնք կինտրոնացընել են իրենց ձեռքում ղեկավարությունը: Հիշեցեք թեկուզ Լույդ Զորջի հայտնի ճառը լիբերալ կուսակցության «ստվերային» կարինեափի մասին: Այս բնագավառում Խորհուրդների Յերկրի և կապիտալիստական յերկրների տարբերությունն այն է, վոր ա) կապիտալիստական յերկրներում բուրժուական կուսակցությունները ղեկավարում են պետությունը հոգուտ բուրժուազիայի շահերի՝ ընդում պրոլետարիատի, մինչդեռ ԽՍՀՄ մեջ կոմկուսը ղեկավարում և պետությունը հոգուտ պրոլետարիատի շահերի՝ ընդում բուրժուազիայի, և բ) այն, վոր բուրժուական կուսակցությունները թաքցնում են ժողովը դիցից իրենց ղեկավար գերը, դիմելով կառկածելի գաղտնի կարինեաների ոգնության, մինչդեռ մեկանում կոմկուսը կարիք չի զգում վհչ մի գաղտնի կարինեափ: Նա դատապարտում ե գաղտնի կարինեաների քաղաքականությունն ու պրաքտիկան և բացահայտ կերպով հայտարարում ամբողջ յերկրին, թե ինքը վերցնում է պետության ղեկավարության պատասխանակությունը:

Պատվիրակներից մեկը.—Նույն հիմունք-

ներմունքի ղեկավարում արդյոք կուսակցությունը պրոֆմիուններին:

Սաալին. — Հիմնականում՝ այն. ձևականորեն կուսակցությունը չի կարող տալ պրոֆմիություններին վհչ մի դիրեկտուրի: Սակայն կուսակցությունը դիրեկտիվներ և տալիս պրոֆմիություններում աշխատող կոմմունիստներին: Հայտնի յե, վոր պրոֆմիությունների մեջ կան կոմմունիստական ֆրակցիաներ այնողիս, ինչպիս Խորհուրդների, կոոպերացիայի և այլ հիմնարկությունների մեջ: Կոմմունիստական այդ ֆրակցիաների պարտականությունն ե ձգտել՝ համոզելու միջոցով՝ պրոֆմիությունների, Խորհուրդների, կոոպերացիայի սուբյանների մեջ կայացնելու այնպիսի վորշումներ, վորոնք համապատասխան լինեն կուսակցության դիրեկտիվներին: Այդ նրանց հաջողվում ե համարյա բոլոր զեպքերում, վորավիճակ կուսակցության ազգեցությունը շատ մեծ ե մասամների վրա, և նա վայելում ե նրանց ընդհանուր վատահությունը: Այս միջոցով ե սահմազմում պրոլետարիատի բազմազան կազմակերպությունների գործուղությունների միանալականությունը: Ասանց դրան՝ բանս վասակարգի այդ բոլոր կազմակերպությունների աշխատանքները կսահանային խառնիմազանն և ցիրուցան բնույթի:

Յերսորդ հարց.—Բանի վոր Ռուսաստանում լեզուի միայն մի կուսակցություն, ինչից զիտեք, թե մասսաները համակրում են կոմմունիզմին:

Պատասխան. — Այդ ճշգան է, վոր ԽՍՀՄ մեջ բուրժուական լեզու կուսակցություններ չկան, վոր լեզություննից սպազում և մեզանում միայն մի կուսակցություն, բանս վորների կուսակցությունը, կոմմու-

նիստների կուսակցությունը։ Մակայն մենք ունենք արդյոք միջացներ և ուղիներ համազվելու, վոր բան-փորների մեծամասնությունը, աշխատավոր մասսաների մեծամասնությունը, համակրում են կոմմունիստներին։ Խոաքը, ինարկե, բանվորների և գյուղացիական մասսաների մասին և, այլ վճչ նոր բուրժուազիայի, այլ վճչ հին շահագործող զասակարգերի թափթփուկների մասին, վորոնց ջախջախել և պրոլետարիատը իր ժամանակին։

Այս, մենք հնարավորություն ունենք, միջացներ և ուղիներ ունենք իմանալու՝ համակրում են կոմմունիստներին բանվորական և գյուղացիական մասսաները, թե չեն համակրում։ Վերցնենք մեր յերկրի կյանքի կարեռագույն մոմենտները և տեսնենք, թե հիմք կա հաստատելու արդյոք, վոր մասսաներն իրոք համակրում են կոմմունիստներին։ Նախ վերցնենք այսպիսի մի կարեռ մոմենտ, ինչպես Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանը 1917 թ., յերբ կոմմունիստների կուսակցությունը, հենց վորպես կուսակցություն, բացահայտ կոչ եր անում բանվորներին ու գյուղացիներին՝ տապալելու բուրժուազիայի իշխանությունը, և յերբ այդ կուսակցությունն սահացավ բանվորների, զինվորների և գյուղացիների խոշոր մեծամասնության աջակցությունը։ Ի՞նչպիսի կացություն եր տիրում այն ժամանակ։ Իշխանության գլուխը կանգնած էյին սոցիալ-հեղափոխականները, ես-երները և սոցիալ-դեմոկրատները (մենշեկիները), վորոնք բոլոր եյին կազմել բուրժուազիայի հետ։ Կենարունում և աեղերում իշխանության ապարատը և 20 միլիոնանոց բանակի հրամանատարությունը գտնվում եր այդ կու-

սակցությունների ձեռքում, կառավարության ձեռքում, իսկ կոմմունիստների կուսակցությունը գտնվում եր կիսալեզակ զրության մեջ։ Բոլոր յերկրների բուրժուաները գուշակում եյին բոլշևիկների կուսակցության անխուսափելի անկումը։ Անտանան ամրող ջովին ու վավին պաշապանում եր կերենսկու կոտավարությունը։ Բայց և այնպես կոմմունիստների, բոլշևիկների կուսակցությունը չեր զագարում կոչ անել պրոլետարիատին՝ տապալելու այդ կառավարությունը և հաստատելու պրոլետարիատի գիկասատուրան։ և ի՞նչ, թիկունքում ու ճակատում աշխատավորների խոշոր մեծամասնությունը ամենավճռական կերպով պաշտպանեց բոլշևիկների կուսակցությունը, տապալելց կերենսկու կառավարությունը և հաստատվեց պրոլետարիատի իշխանությունը։ Ի՞նչպես պատահեց, վոր բոլշևիկները այն ժամանակ հազվող զուրս յեկան, հակասակրություն յերկրների բուրժուաների թշնամական գուշակություն, թե բոլշևիկների կուսակցությունը կործանվության վելու յի։ Այս հանգամանքն ապացույց չե արդյոք, վոր աշխատավոր լայն մասսաները համակրում են բուշիկների կուսակցությանը։ Յև կարծում եմ ապաշխիկների կուսակցությանը։ Յև կարծում եմ ապաշխիկների կոմմունիստների կուսակցության՝ ցույց եւ Ահա ձեզ կոմմունիստների կուսակցության հնակչության լայն մասսաների մեջ ունեցած հեղինարկության և աղղեցության առաջին ստուգումը։

Վերցնենք հետեւալ շրջանը, սազմական միջամասության շրջանը, քաքարացիական պատերազմի շրջանը, յերբ անզիփական կապիտալիստները ոկկուպացիայի յենթարկեցին Ռուսաստանի հյուսիսը, Արֆանցիկների և Մուրմանի սայմանը, յերբ ամերիկյան, անգլիակի և Ֆրանսիական կապիտալիստական,

ները բոհագրավեցին Սիրիսը, առաջ քաշելով կողմակին, և յեր Փրանսիական ու անդլիական կապիտալիստաները Ռուսաստանի հարավը բոհագրավելու քայլը արին, վահանի բարձրացնելով Դենիկինին և Վրանգելին։ Սա Անտանափի և Ռուսաստանի հականեղագոխական գեներալների պատերազմն եր Մոսկվայի կոմմունիստական կոռավարության դեմ, մեր հեղափոխության հոկտեմբերյան նվաճումների դեմ։ Սա կոմկուսի բանվորական ու գյուղացիական լայն զանգվածների մեջ ուժի և կայունության ամենամեծ ստուգման ժամանակաշրջանն եր Յեկանչ, միթե հայտնի չե, վոր քաղաքացիական կոինսերի հետևանքով բոհագրավոները գուրս շպըրտվեցին Ռուսաստանից, իսկ հականեղագոխական գեներալները ջարգիւցին Կարմիր բանակի կողմից։

Յեկանաց այսաեղ յերեան յեկավ, վոր պատերազմի բազով վերջին հաշվով վճռվում ե վոչ թե տեխնիկայով, վորը առատորեն մատակարարվում եր Կուչակին և Դենիկինին ԽՍՀՄ թշնամիների կողմից, այլ ճիշտ քաղաքականությամբ, բնակչության միլիոննոր մասսաների համակրությամբ և աջակցությամբ։

Պատահական եր արդյոք, վոր բոլշեկոների կուսակցությունը հաղթող գուրս յեկավ։ Ի հարկե, պատահական չեր։ Այս հանգամանքը չի խոսում արդյոք այն մասին, թե կոմմունիստների կուսակցությունը մեզ մոռ վայելում ե աշխատավորների լայն մասսաների համակրությունը։ Յես կարծում եմ, վոր խասում է։ Ահա ձեզ յերկրորդ ստուգումը ԽՍՀՄ կոմմունիստական կուսակցության ուժի և կայունության։

Անցնենք այժմ ներկա ժամանակաշրջանին, յետ-

պատերազմյան շրջանին, յեր առաջ յեկան խաղաղ շինարարության հարցերը, յեր անստեսական քայլայման շրջանին հաջորդեց ինտուստրիայի վերականգնման շրջանը, և վերջապես մեր ժողովրդական անտեսության վշանը, և վերջապես մեր ժողովրդական անտեսության վերակառուցման վշանը՝ տեխնիկական նոր բաղադրի վրա։ Ունինք այժմ միջոցներ և ուղիներ ըստ ուղիների համար կոմմունիստական կուսակցության ույժն ու տոկունությունը և վորոշելու աշխատավոր լայն մասսաների՝ դեպի այդ կուսակցությունն ունեցած համակրության աստիճանը։

Յես կարծում եմ՝ ունենք վերցնենք նախ և առաջ պլովմիլությունները, վորոնք համախմբում են մոտ 10 միլիոն պլովմարներ, և տեսնենք մեր պրոֆմիլության գեկավար մարմինների կազմը։ Պատահական ե, վոր բոլոր այդ մարմինների գլուխ են կանգնած կոմմունիստները։ Ի հարկե, պատահական չե։ Անմտություն կլիներ մտածել, թե ԽՍՀՄ բանվորները անտարբեր են դեպի պրոֆմիլությունների գեկավար մարմինները։ ԽՍՀՄ բանվորները աճել և դաստիարակվել են յերեք հեղափոխությունների փոթորիկների մեջ։ Նրանք սովորել են, ինչպես վոչ վոք, ստուգել իրենց դեկավարներին և դեն շղթաել նրանց, յեթե նրանք չեն բավարարում պրոլետարիատի շահերը։

Մի ժամանակ մեր կուսակցության մեջ ամենաժողովրդական մարզը Պեկինանովը եր։ Սակայն բանվորները վճռականորեն մեկուսացրին նրան, յեր հավորվել են գենությունների կոմմունիստների կողմից։ Յեթի նման բանվորները արտահայտում են իրենց կուսարյալ վատահությունը կոմմունիստներին՝ հանձնելով նրանց պատասխանատու պաշտոններ

պրոֆմիությունների մեջ, այդ ուղղակի նշանակում է, թե կոմմունիստական կուսակցության ույժը և տոկունությունը շատ մեծ և ԽՍՀՄ բանվորների մեջ: Այս ձեզ ստուգում այն բանի, վոր բանվորների լայն մասսաները անպայման համակրում են կոմմունիստական կուսակցության:

Վերցնենք խորհրդային վերջին ընտրությունները: Խորհրդականը ընտրելու իրավունք ունի ԽՍՀՄ վողջ չափահաս բնակչությունը, սկսած 18 տարեկանից, առանց սեփի և ազգի խարսության, բացի բարժուական տարրերից, ուրիշի աշխատանքը շահագործողներից և բնարական իրավունքից դրկվածներից: Աս կազմում ե մոտ 60 միլիոն ընտրող: Արա խոշոր մեծամասնությունը, ի հարկե, զյուղացիներ են: Այս 60 միլիոնից իրենց ընտրական իրավունքից ոգտվում են մոտ 51 տոկոսը, այսինքն ավելի քան 30 միլիոն մարդ:

Այժմ նայեցեք մեր կենտրոնի և տեղերի խորհրդականների որդանների զեկավար կազմին: Կարելի՞ յի արդյոք պատահական համարել այն փաստը, վոր ընտրական զեկավար տարրերի խոշոր մեծամասնությունը կազմում են կոմմունիստականը: Պարզ է, վոր սա պատահական չի կարելի համարել: Այս փաստը չի խոսում արդյոք այն մասին, թե կոմմունիստական կուսակցությունը վայելում է գյուղացիական միլիոնավոր մասսաների վստահությունը: Յես կարծում եմ, վոր խոսում է:

Այս ձեզ ելի մի ստուգում կոմմունիստական կուսակցության ուժի և տոկունության:

Վերցնենք կոմսոմոլը, վորը համախմբում ե մոտ

2 միլիոն բանվոր-գյուղացիական յերիտասարդություն: Կարելի՞ յի արդյոք պատահական համարել այն փաստը, վոր կոմմունիստյության ընտրական զեկավար տարրերի մեծամասնությունը կազմում են կոմմունիստականը: Յես կարծում եմ, վոր չի կարելի պատահականություն համարել: Այս և մի այլ ստուգում կոմմունիստական կուսակցության ուժի և հեղինակության:

Վերջապես վերցնենք մեր անհամար կոնֆերանսները, խորհրդակցությունները, պատգամավորական ժողովները և այլն, վորոնք ընդգրկում են միլիոնավոր աշխատավոր մասսաներ, տղամարդիկ, կանոյք, բանվորներ, բանվորուհիներ, զյուղացիներ և գեղջուհիներ: ԽՍՀՄ կազմի մեջ մասնող բոլոր ազգություններից:

Արեմուտքում յերբեմն հեղանում են այս խորհրդակցություններն ու կոնֆերանսները, ասելով, թե սուսները սիրում են առհասարակ խոսել: Մինչդեռ մեզ համար այդ խորհրդակցությունները և կոնֆերանսները խոչըն նշանակություն ունեն թե մեր սիսակները տրամադրությունը ստուգելու և թե մեր սիսակները յերեան հանելու և այդ սիսակները վերացնելու համար միջոցներ զանելու տեսակետից, վորովհետև քիչ սիսակներ չկան մեզ մոտ, մենք նրանց չենք թաքցնում և կարծում ենք, թե սիսակները հայտարերելը և նրանց ազնվորեն ուղղելը լավագույն միջոցներն են յերկրի զեկավարությունը բարելավելու համար: Նայեցեք այդ խորհրդակցությունների և կոնֆերանսների հակորների ճամկերին, նայեցեք այդ «պարզ մարդկանց», բանվորների և զյուղացիների գործնական դիտու-

թյունները, նայեցեք նրանց վորոշումները և գուք կտեսնեք, թե ինչքան խոշոր և կոմմունիստական կուսակցության ազգեցությունը և հեղինակությունը, դուք կտեսնեք, վոր այդ ազգեցությանը և հեղինակությանը կարող և նախանձել ամեն մի կուսակցություն ամբողջ աշխարհում։ Ահա ձեզ մի ստուգում և կոմմունիստական կուսակցության կայունության:

Սբանք են այն միջոցները և ուղիները, վոր հնարավորություն են տալիս ստուգելու կոմմունիտական կուսակցության ուժն ու ազգիցությունը ժողովրդական մասսաների մեջ:

Ահա թե վնդակղից և ինձ հայտնի, վոր ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների լայն մասսաները համակրում են կոմմունիստական կուսակցության:

Զ ո ր բ ո ր դ հ ա ր ց .— Յ ե թ է ա ն կ ու ս ա կ յ ա -
կ ա ն մ ի խ մ բ ա կ ց ու թ յ ու ն Փ ր ա կ ց ի ա կ ա զ մ ե ր և
ը ն ա ր ու թ յ ու ն ն ե ր ի ժ ա մ ա ն ա կ ա ս ա ջ ա ր կ ե ր ի թ ե կ -
ն ա ծ ու ն ի ր ը՝ կ ա ն գ ն ա ծ խ ո ր հ ր դ ա յ ի ն կ ա ռ ա վ ա ր ու -
թ յ ա ն պ լ ա ս ա փ ո ր մ ի վ ր ա , բ ա յ ց մ ի ե լ ն ու յ ն ժ ա մ ա -
ն ա կ պ ա հ ա ն չ ե ր ա ր տ ա ք ի ն ա ս ե տ ր ի մ ե ն ա շ ն ո ր հ ի
վ ե ր ա ց ու մ ը , կ լ ա ր ո ղ ա ն ա յ ի ն ա ր դ յ ո ք ն ր ա ն ք ու -
ն ե ն ա լ ի ր ե ն ց մ ի ջ ո ց ն ի ր ը և մ զ ե լ ք ա ղ ա ք ա կ ա ն
ա կ տ ի վ կ ա մ պ ա ն ի ս ի :

Պատասխան.—Յես կարծում եմ, վոր այդ
հարցի մեջ կա անհաջող հակասություն։ Անկարելի
յի պատկերացնել մի խմբակցություն, վորը կանգ-
նած լինի խորհրդային կառավարության պլատֆորմի
վրա և դրա հետ միասին պահանջի արտաքին տու-
արի մենաշնորհի վերացումը։ Ե՞նչու։ Վորովհետեւ ար-
տաքին տուարի մենաշնորհը հանգիստանում և խորհրդ-

գային կառավարության անսասան հիմքերից (պլատ-
ֆորմաներից) մեկը վորովհետև արտաքին առևտու-
մենաշնորհի վերացումը պահանջող խմբակը չի կա-
րող կանգնել խորհրդային կառավարության պաշտոպ-
նության տեսակետի վրա։ Վորովհետև այդպիսի խըմ-
բակը կարող է լինել միայն այն խմբակը, վոր հենց
թշնամի յեւ ամբողջ խորհրդային հասարակարգին։

ԽՍՀՄ մեջ կան, ի հարկե, այնպիսի տարրեր, վորոնք պահանջում են վերացնել արտաքին տունարի մենաշնորհը: Դրանք նեպմաններն են, կուլակներն են և ջախջախված շահագործող դասակարգերի մնացորդները: Առկայն այդ տարրերը կազմում են բնակչության չնչին փոքրամասնությունը: Յես կարծում եմ, վոր պատվիրակությունն իր հարցի մեջ այդ տարրերի մասին է, վոր խառնմ է: Խոկ յեթի խոսքը վերաբերում է բանվորներին և գյուղացիական աշխատավոր մասսաներին, այդ գեղագործում յես կասեմ, վոր արտաքին առեւրի մենաշնորհի վերացման պահանջը կարող եր միայն ծիծազ հարուցել նրանց մեջ և առաջ բերել թշնամական վերաբերմունք:

Հիրավի, ի՞նչ կնշանակեր բանվորների համար ար-
տաքին առևտութի մեխանորդի վերացումը։ Դա նրանց
համար կնշանակեր՝ հրաժարվել յերկրի ինդուստրիա-
լիզացիայից, նոր գործարաններ շինելուց և հին ֆար-
բիկաներն ու գործարաններն ընդլայնելուց։ Դա
նրանց համար կնշանակեր՝ վողովել ԽՍՀՄ կապիտա-
լիստական յերկրների ապրանքներով և մեր ինդուս-
տրիալիզացիայի վոչչացումն՝ շնորհիվ նրա համեմա-
տաբար յետամետացության, դա կնշանակեր՝ ավելացնել
գործարութիւնների թիվը, վատացնել բանվոր զասակաբ-

զի նյութական գլությունը և թուլացնել նրա տնտեսական ու քաղաքական գիրքերը: Վերջնական հաշվավ՝ զա կնշանակեր նեպմանի և առնասարակ նոր բուժուազիայի ուժեղացումն: ԽՍՀՄ պրոլետարիատը միթե կարող և այլապի ինքասապանության դիմել: Պարզ է, վոր չե կարող: Իսկ արտաքին առևտրի մենաշնորհի վերացումը ի՞նչ կնշանակեր զյուղացիության աշխատավոր մասաների համար: Դա կնշանակեր՝ մեր ինքնուրույն յերկրը զարձնել կիսապաղութային յերկիր և աղքատության մատնել զյուղացիական զանգվածները: Դա կը նշանակեր վերագարձ գեպի «ապատ առևտրի» այն սեծիմը, վոր զյություն ուներ կոլչակի և Դենիկինի որոք, յերբ հականեղափոխական գեներալների և «զաշնակիցների» միացյալ ուժերը ամենայն ազատությամբ կողապատում ու թալանում եյին բազմամիլիոն զյուղացիությանը: Վերջին հաշվավ զա կնշանակեր կուլտակների և շահագործող տարրերի ուժեղացումն զյուղում: Գյուղացիք բավական շատ են զգացել այդ սեծիմի բարիքները Աւկացնայում, Հուսիսային կովկասում, Վոլգայի սայսնում և Սիրիբում: Ի՞նչ հիմքեր ունենք կարծելու, թե զյուղացիք կկամունան նորից իրենց շինոքը գնել այդ ծանր լծի տակ: Միթե պարզ չե, վոր զյուղացիության մասսաները չեն կարող կողմնակից մինել արտաքին առևտրի մենաշնորհի վերացմանը:

Պատվիրտ կներից մեկը. — Պատվիրակությունն առաջ բաշեց արտաքին առևտրի մենաշնորհի և որա վերացման կետը, համարելով այն իրրե մի կետ, վորի շուրջը կարող եր կազմակերպիլ բնակչության մի ամրող խումբ, յեթե ԽՍՀՄ մեջ չիներ մի կուսակցության մենաշնորհը, լեգալության մենաշնորհը:

Սա ալին. — Այդպիսով պատգամավորությունը նորից վերադառնում է կոմկուսի, իրրե ԽՍՀՄ մեջ միակ լեգալ կուսակցության, մենաշնորհին: Այդ հարցի կարծ պատասխանը յես արգեն ավի, յերբ խոսում էիր բանվորական ու զյուղացիական բազմամիլիոն մասսաների գեպի կոմկուսը տածած համակրանքի ստուգման մասին: Ինչ վերաբերում է բնակչության մյուս խավերին, այսինքն՝ կուլակներին, նեպմաններին և ջախջախված շահագործող զասակարգերի մնացորդներին, պիտի առեմ, վոր նրանք մեզանում իրավունք չունեն կազմակերպելու իրենց քաղաքական կազմակերպությունները ճիշտ այնպես, ինչպես իրավունք չունեն նաև ընտրություններին մասնակցելու: Պրոլետարիատը իւլեց բուրժուազիայից վահ միայն ֆարբիկաները, գործարանները, բանկերը, յերկաթուղիները, հողերն ու հանքերը, այլև խեց նրանից՝ իր քաղաքական կազմակերպություններն ունենալու իրավունքը, վորովհետեւ պրոլետարիատը չի ուզում, վոր բուրժուազիայից իշխանությունը վերականգնվի: Բայտ յերեւյթին պատվիրակությունը չի առարկում այն բանի գեմ, վոր ԽՍՀՄ պրոլետարիատը բուրժուազիայից իւլեց նրա ֆաբրիկաները, գործարանները, հողը, յերկաթուղին, բանկերը և հանքերը (ծիծաղ): Սակայն պատվիրակությունը, ինչպես թվում ե ինձ, մի փոքր տարակուսում է այն առթիվ, վոր պրոլետարիատը դրանցով չի բավականացել այլ ավելի առաջ և զնացել խելով բուրժուազիայից նրա քաղաքական իրավունքները: Սա, իմ կարծիքով, այնքան ել տրամարանական չե, ավելի ճիշտ՝ բոլորովին արամարանական չե: Ի՞նչ հիման վրա պրոլետարիատից մեծանողություն են պա-

հանջում բուրժուազիայի նկատմամբ: Միթե բուրժուազիան Արևմուտքում, իշխանության զլուխ կանգնած լինելով, թեկուղ ամենափաքը մեծառզություն ցույց է տալիս բանվոր դասակարգի նկատմամբ: Միթե նա ընդհատակյա գրության չի հասցրել բանվոր դասակարգի խական հեղափոխական կուսակցություններին: Ի՞նչ ճիման վրա ՍԽՀՄ պրոլետարիատից մեծառություն են պահանջում գեպի իր դասակարգային թշնամին: Կարծում եմ, վոր տրամաբանությունը այլ բան է ասում: Նա, ով մտածում է բուրժուազիային իր քաղաքական իրավունքները վերադարձնելու մասին, նա յեթե ուզում է տրամաբանական լինել պետք է, ավելի հեռու գնա և հարց դնի նույն վերադարձնելու բուրժուազիային ֆաբրիկաները, գործարանները, յերկաթուղիներն ու բանկերը:

Պատվիրակներից մեկն մեկը.—Պատվիրակության խնդիրներից մեկն եր պարզեց թե ի՞նչպես կարող են բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ յեղած կարծիքները, կոմկուսի կարծիքներից տարրեր, իրենց որինական արտահայտությունը զտնել: Սխալ կլիներ խնդիրն այնպես հասկանալ թե պատվիրակությունը հետաքրքրվում է բուրժուազիային քաղաքական իրավունքներ տալու հարցով և թե՛ ի՞նչպես բուրժուազիան կարող է որինական արտահայտություն զտնել իր կարծիքներն արտահայտելու համար: Խոսքը վերաբերում է հենց նրան, թե ի՞նչպես կարող են բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ յեղած կարծիքները, վորոնք տարրեր են կոմկուսի կարծիքներից, իրենց որինական արտահայտությունը զտնել:

Մյուս պատվիրակը.—Այդ տարրեր կարծիքները կարող կլինելին իրենց արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններում, պրոֆմիություններում և այլն:

Սատ լին:—Եատ լավ, ուրեմն խոսքը վերաբերում է վոչ թե բուրժուազիայի քաղաքական իրավունքների վերականգնմանը, այլ բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ գոյություն ունեցող կարծիքների պայքարին: Արդյոք բանվորների և գյուղացության աշխատավորական զանգվածների մեջ կարծիքների պայքար ներկայում գոյություն ունի: Զի կարող պատահեք վոր միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները միասնակակ մտածեին, այդպիսի բան կյանքի մեջ չի պատահում: Նախ և առաջ մեծ տարրերություն կա բանվորների ու գյուղացիների միջև՝ նըրանց մնանական զրության տեսակետից և այս կամ այն հարցի մասին նըրանց ունեցած հայացքների տեսակետից: Յերկրորդ, գոյություն ունեն հայացքների վորոշարքերություններ հենց իրեն, բանվոր դասակարգի մեջ, զտատիրատկության տարրերություն, հասակների ու խառնվածքների տարրերություն, տարրերություն հիմնական, հին բանվորների և գյուղից յեկած բանվորների միջև և այլն: Այս բոլորը բանվորների և գյուղացիության աշխատավորական զանգվածների մեջ կարծիքների կոիվ և սուածացնում, վորը իր լեզար արտահայտությունն է ստանում արհեստակցական միությունների ժողովներում, կոոպերացիայում, խորհուրդների ընտրության ժամանակ և այլն: Սակայն այժմ, պրոլետարական գիլտատուրայի պայմաններում և անցյալում, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ

յեղադ կարծիքների պայքարի միջև կու տրմասական տարբերություն։ Այն ժամանակը, անցյալում, կարծիքների պայքարը բանվորների ու աշխատավոր զյուղացիներյան մեջ կենտրոնանում էր զլլավորապես կալվածատերերին, ցարիկներ ու բուրժուազիային տապակելու և բուրժուական կարգերը ջախջախելու հարցերի շուրջը։

Բայց այժմ, պրոլետարիատի գիլաստուրայի պայմաններում, կարծիքների պայքարը վոչ թե խորհրդային իշխանության և խորհրդային կարգերի տապալման շուրջն և տեղի ունենաւմ, այլ խորհրդային իշխանության մարմինների և նրանց աշխատանքի բարելավման շուրջը։ Այստեղ և ահա արմատական տարրերությունը՝ վոչինչ զարմանալի բան չկա նրանում, վորդյություն ունեցող կարգերի հեղափոխական տառապալման հարցի շուրջը տեղի ունեցող կարծիքների պայքարը հիմք տվեց անցյալում յերեան գալու միքանի իրար հետ մրցող կուսակցությունների, բանվոր դասակարգի և զյուղացիության աշխատավոր զանգվածների ներսում։ Այդ կուսակցություններն ելին բոլշևիկների կուսակցությունը, մենշևիկների ու եռեռների կուսակցությունները։ Մյուս կողմից բոլորովին դժվար չե հասկանալ վորդ կարծիքների պայքարը այժմ, պրոլետարիատի գիլաստուրայի ժամանակի՝ վորդ հապատակների և վոչ թե տապակել գոյություն ունեցող խորհրդային կարգերը, այլ նրանց բարելավումն ու ամրապնումը, — բանվորների և զյուղի աշխատավոր զանգվածների մեջ մի քանի կուսակցությունների գոյությունը ունենալու համար սնունդ չի տալիս։ Ահա թե ինչու սոսկ մի կուսակցության, կոմմունիստական կուսակցության լեգալությունը, այդ կուսակցության

միհաշնորհը վոչ միայն առարկություններ չի առաջացնում բանվորների ու աշխատավոր զյուղացիների մեջ, այլ ընդհակառակը, ընդունվում է վորպես անհրաժեշտ և ցանկալի մի բան։

Մեր կուսակցության, իբրև յերկրում միակ լեզու կուսակցության (կուսակցության մոնոպոլիան) զրությունը արհեստական և զիտավորյալ, մտածածին զրություն չի։ Այդպիսի զրությունը չի կարող աղմինիստրատիվ մախիսացիաներով ու արհեստական կերպավ ստեղծվել։ Մեր կուսակցության զրությունն առաջ յեկավ կյանքից և պատմականորեն կազմվեց իրեն հետևանք այն բանի, վորդ եռեռների ու մենշևիկների կուսակցությունները վերջնականապես սնանկացան և անհայտացան պատմական բեմից՝ մեր իրականության պայմաններում։ Ի՞նչ ելին եռեռների և մենշևիկների կուսակցություններն անցյալում։ Բուրժուական պազեցության տարածողներ պրոլետարիատի վրա։ Ի՞նչով եր պատվաստվում և պահվում այդ կուսակցությունների գոյությունը մինչև 1917 թվականի հոկտեմբերը։ Բուրժուական գասակարգի և վերջապես բուրժուական իշխանության գոյությամբ։ Միթե պարզ չե, վորդ բուրժուազիայի անկումով պետք ե անհայտանային նոր այդ կուսակցությունների գոյության հիմքերը։ Իսկ ի՞նչ զարձան այդ կուսակցությունները 1917 թվականի հոկտեմբերից հետո։ Նրանք զարձան կուսակցությունները 1917 թվականի հոկտեմբերից հետո։ Նրանք զարձան կապիտալիզմը վերականգնելու և պրոլետարիատի իշխանությունը տապալելու կուսակցությունները։ Միթե պարզ չե, վորդ այդ կուսակցությունները պետք ե կորցնելին իրենց վոտի տակի հողը բանվորների և զյուղացիների աշխատավոր մասսաների մեջ։

Բանսկոր դասակարգի վրա ազգեցություն պահելու համար մզված կոփվը կոմմունիստների կուսակցության և հս-երների ու մենշևիկների կուսակցությունների միջև նոր չեւ սկսվել: Նա սկիզբն է առնում տակավին 1905 թվականից առաջ, յերբ հանդես յեկան առաջին մասսայական շարժումները Ռուսաստանում: 1903 թվականից մինչև 1917 թվականը հանդիսանում է մեր յերկրի բանվոր դասակարգի կարծիքների մեջ տիրող պայքարի ամենակատաղի շրջան—գա բոլշևիկների, ես-երների ու մենշևիկների միջև տիրող պայքարի կատաղի շրջանն և հանուն բանվոր դասակարգի վրա ունենալիք ազգեցության: Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ բանվոր դասակարգն ապրեց յերեք հեղափոխություն: Այս հեղափոխությունների հրդեհի մեջ նա փորձում էր և ստուգում այդ կուսակցությունները, նրանց պետքականությունը պրոլետարական հեղափոխության համար, նրանց պրոլետարական հեղափոխականությունը: Յեվ ահա 1917 թվականի հոկտեմբերյան որերին, յերբ պատմությունը տվեց անցյալ հեղափոխական պայքարի հաշվինարդարը, յերբ պատմությունն իր կշեռքով տվեց բանվոր դասակարգի ներսում իրար հետ պայքարող կուսակցությունների տեսակարգը կշեռքով կատարեց իր ընտրությունը, կանգ առնելով կոմմունիստական կուսակցության, իբրև միակ պրոլետարական կուսակցության վրա: Ի՞նչո՞վ բացարձի վոր բանվոր դասակարգն ընտրեց կոմմունիստական կուսակցությունը: Միթե փաստ չե, վոր բոլշևիկները Անդինդրագի խորհրդում, որինակ 1917 թվականի ապրիլին կազմում եյին չնչին փոքրա-

մասնություն: Միթե փաստ չե, վոր հս-երները և մենշևիկներն այն ժամանակ խորհուրդներում կազմում եյին ճնշող մեծամասնություն: Միթե փաստ չե, վոր հսկանմբերյան որերի սկզբին իշխանության ամբողջ ապարատը, հարկադրական բոլոր միջոցները գտընվում եյին հս-երների ու մենշևիկների ձեռքին, վորոնք բլոկ եյին կազմել բուրժուազիայի հետ: Դա բացարձի վոր կոմկուսն այն հանգամանքով, վոր կոմկուսն այն ժամանակ կողմնակից եր պատրազմը վերջացնելուն և ամմիջապես դեմոկրատական խաղաղություն կնքելուն, —մինչդեռ հս-երները և մենշևիկները պաշտպանում եյին «պատերազմ» մինչև հաղթական վախճան» լոգունգը, այսինքն՝ ուզում եյին շարունակել իմպերիալիստական պատրազմը: Դա բացարձի վոր և նըրանով, վոր կոմկուսն ուզում եր, վոր տապալվի կերնեսկու կառավարությունը, տապալվի բուրժուազիայի իշխանությունը, առգայնացման յենթարկվեն ֆարբեկաները, գործարանները, բանկերը և յերկաթուղիները, —մինչդեռ հս-երների ու մենշևիկների կուսակցությունները պայքարում եյին կերենսկու կառավարության համար և պաշտպանում եյին ֆարբեկաների, գործարանների, բանկերի ու յերկաթուղիների նկատմամբ բուրժուազիայի ունեցած իրավունքները: Դա բացարձի վոր և նըրանով, վոր կոմմունիստների կուսակցությունն այն ժամանակ կողմնակից եր կալվածատերերի հողը բանագրավելուն հոգուտ դյուզացիոնին, մինչդեռ հս-երների ու մենշևիկների կուսակցությունները այդ հարցը յետաձգում եյին մինչև Հիմնադիր ժողովը, վորի կումարումը նրանք նույնպես յետաձգում եյին անորոշ ժամանակով:

Ուրիմն, ի՞նչ կա զարմանալու, յեթե բանվորների և չքավոր գյուղացիության ընտրությունը վերջապես հանգեց կոմմունիստական կուսակցությանը։ Ի՞նչ կա զարմանալու, յեթե դրանից հետո ևս-երների ու մենչեւիների կուսակցություններն այնպիս արագ ընկղմվեցին և իջան հաստակը։ Անա թե ի՞նչո՞ւ կոմմունիստական կուսակցությունը հասավ իշխանության։

Հետապա շրջանը, 1917 թվականի հոկտեմբերից հետո յեկած շրջանը, քաղաքացիական պատերազմներից շրջանը, հանդիսացավ ևս-երների ու մենշևիների վերջնական վոճաչացման և բոլշևիների կուսակցության վերջնական հաղթանակի շրջան։ Մենշևիներն ու ևս-երները իրենք հեշտացրին այս ժամանակաշրջանում կոմմունակցության հաղթանակը։ Զարդված ու հաստիը շպրտված հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ, մենշևիլյան ու ևս-երական կուսակցությունների բեկորներն սկսեցին կապեր ստեղծել կուլտակների հակաների հականափոխական ասպասամբությունների հետ, ըլոկ կազմեցին կոլչակին ու Դենիկինին հետազո՞ների հետ, Անտառանակին ծառայության գնացին և վերջնականապես թաղեցին իրենք իրենց բանվորների ու գյուղացիների աչքում։ Այսպիսի մի պատկեր ստեղծվեց, վոր ևս-երներն ու մենշևիները, վորոնք բուրժուական հեղափոխականներից բուրժուական հակաների հականափոխականների եյին վերածվել ոգնում եյին Անտառանակին՝ Խորհրդացին Խուսաստանը խեղգելու գործում, մինչդեռ բոլշևիների կուսակցությունը, համախմբելով իր շուրջը բոլոր կենդանին ու հեղափոխական տարրերին, միշտ բանվորների ու գյուղացիների նորանոր խմբեր եր վոտքի հանում սոցիալի-

տական հայրենիքի պայքարի և Անտառանակի գեմ կոխվ մղելու համար։ Միանդամայն ընական և, վոր կոմմունիստական կուսակցությունը պետք է բերեր, և հիրավի բերեց, միայն ևս-երների ու մենշևիների լիակատար պարագաները։ Ի՞նչ կա այսակ զարմանալու, յեթե այդ բոլորից հետո կոմմունիստական կուսակցությունը զարձագ բանվոր զասակարգի և չքավոր զյուղացիության միակ կուսակցությունը։

Անա թե ի՞նչպես առաջացավ մեղանում կոմկուսի, վորովես յերկրում յեղած միակ լեգալ կուսակցության, մենաշնորհը։

Դուք խոսում եք բանվորների ու գյուղացիության մեջ կարծիքների պայքարի մասին այժմ, պրոլետարիատի զիկտատուրայի պայմաններում։ Յես արդեն առացի, վոր կարծիքների այդ պայքարը կա ու կլինի, և առանց զրան անհնարին և առաջազիւթյուն։ Մակայն բանվորների մեջ կարծիքների պայքարը ներկա պայմաններում տարվում է վոչ թե խորհրդացին իրավակարգը տապալելու ոկզունքային հարցի շուրջը, այլ խորհուրդները բարելավելու գործնական հարցերի և խորհրդացին մարմինների սխալներն ուղղելու սկզբունքների շուրջը, այլ կերպ ասած՝ խորհրդացին իշխանությունն ամրապնդելու շուրջը։ Ի՞նքնին հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը միայն կարող է ամրապնդել և կատարելագործել կոմմունիստական կուսակցությունը։ Ի՞նքնին հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը միայն կարող է ամրապնդել կոմկուսի մենաշնորհը։ Միանդամայն հասկանալի յե, վոր կարծիքների այդպիսի պայքարը չի կարող սնունդ տալ մյուս կուսակցությունների կազ-

մակերպության համար՝ բանվոր գասակարգի և աշխատավոր գյուղացիության նկատմամբ:

Հինգերությունը հարցում էք դուք հակերձ կերպով հաղորդել մեզ հիմնական տարածայնությունները ձեր և Տրոցկու միջև։

Պատասխան. — Ամենից առաջ պետք է տանի, վոր տարածայնությունները Տրոցկու հետ անհատական բնույթ չեն կրում։ Յեթե տարածայնությունները անհատական բնույթ կրեյին, կուսակցությունը միժամանակ չեր զբաղվի այդ գործով, վորովհետեւ նա չի սիրում, վոր առանձին մարդիկ դուրս ցցվելին։ Պարզ է, վոր խոսքը վերաբերում է կուսակցության մեջ գոյություն ունեցող տարածայնություններին։ Յես այսպես հասկացա այդ հարցը։ Այս, այդ տարածայնությունները գոյություն ունեն կուսակցության մեջ։

Այդ տարածայնությունների բնույթի մասին բավական մանրամասն պատմեցին վերջերս իրենց զեկուցումների մեջ ընկ. Ռիկովը Մոսկվայում և ընկ. Բուխարինը Լենինգրադում։ Այդ զեկուցումները հրապարակված են։ Այն բոլորին, ինչ ասված է այդ զեկուցումներում տարածայնությունների մասին, վոչինչ ավելացնելու բան չունեմ։ Յեթե զուք չունեք այդ վավերագրերը, կարող եմ ձեռք բերել ձեզ համար։ (Պատվիրակությունը հաղորդում է, վոր այդ վավերագրերը ինքն ունի)։

Պատվիրակն էր ից մեկը. — Մեր վերագրածից հետո մեզ պիտի հարցնեն այդ տարածայնությունների մասին, սակայն մենք բոլոր փաստաթղթերը չունենք։ Որինակ մենք չունենք «83»-ի պլատֆորմը։

Ստուլին. — Յես այդ պլատֆորմը չեմ ստորագրել. իրավունք չունեմ ուրիշի փաստաթղթերի վերաբերմամբ կարգադրություն անել։ (Ծիծաղ)։

Վեցերությունը արագորության զարգացման համար հիմնական զրգիչ և հանդիսանում ու գույն ստանալու հույսը։ Այդ զրգիչն, իշարկե, համեմատական չափով բացակայում է ԽՍՀՄ մեջ։ Ի՞նչն է փոխարինում նրան և այդ փոխարինումը ձեր կարծիքով, վարքան և եփփեկտավոր կարմղ և արդյոք այդ փոխարինով գործոնը լինել մշտական։

Պատասխան. — Ճիշտ է, վոր կապիտալիստական անականության հիմնական շարժիչը հանդիսանում է ուգուստանալու սկզբունքը։ Ճիշտ և նաև այն, վոր ուգուստանալու անսակետը վճչ նպատակ է, վճչ եւ շարժիչ մեր սոցիալիստական արգյունագործության համար։ Այդ գեղագում հապա ինչն և հանդիսանում մեր ինգուստարիսայի շարժիչը։

Ամենից առաջ հանգամանքը, վոր մեզանում փարբեկաներն ու գործարանները պատկանում են վճչ թի կապիտալիստաներին, այլ ամբողջ ժողովրդին, և վոր փարբեկաներն ու գործարանները կառավարում են վճչ կապիտալիստաների նշանակած մարդկին այլ բանվոր զանակարգի ներկայացուցիչները։ Այն զիտակցությունը, վոր բանվորներն աշխատում են վճչ թի կապիտալիստների, այլ իրենց սեփական պետության և իրենց սեփական գասակարգի համար, հանդիսանում է մեր արգյունագործության զարգացման ու կատարելագործման խոշոր շարժիչ ուժը։ Պետք է շեշտեմ, վոր

մեզանում մեր Փարբիկաների ու գործարանների զի-
րեկասորների ճնշող մհծամանությունը կազմում էն
րանվորները, վորոնց նշանակում և ժողովրդական ՏԵՆ-
ախության Գելապույն Խորհուրդը՝ պրոֆմիտթյուն-
ների համաձայնությամբ, ըստ վորում վոչ մի զիրեկ-
տոր չի կարող մնալ իր պաշտոնում հակառակ բանվոր-
ների համապատասխան պրոֆմիտթյունների կամքի:

Պետք է նկատել նաև, վոր յուրաքանչյուր Փար-
բիկա կամ գործարան ունի բանվորների կողմից ըն-
տըրված իր Փարբիկային կամ գործարանային կոմիտեն,
վորը կոնտրոլի յե յենթարկում այդ ձեռնարկության
վարչության գործունեյութունը: Վերջապես հարկա-
վոր և ասել վոր արդյունավործական յուրաքանչյուր
ձեռնարկության մեջ կան բանվորների այսպես կոչ-
ված արտադրական խորհրդակցություններ, վորի մեջ
մտնում են ձեռնարկության բոլոր բանվորները, վորոնք
խորհրդակցության միջոցին ստուգում են ձեռնարկու-
թյան գիրեկարորի ամբողջ աշխատանքը, քննում են
գործարանի վարչության աշխատանքի պլանը, ցույց
տալիս սխալներն ու թերությունները և հնարավո-
րություն. ունեն այդ պակասություններն ուղղելու
պրոֆմիտթյունների, կուսակցության ու խորհրդային
իշխանության որդանների միջոցավ: Դժվար չե հասկա-
նալ, վոր այս բոլոր համագումարները հիմնովին փո-
խում են թե բանվորների գրությունը և թե ձեռնար-
կություններում տիրող կարգերը: Յեթե կապիտալիզ-
մի իրավակարգում բանվորը գործարանի վրա նայում
է վարպես բանափառ վրա, ապա, խորհրդային իրավակար-
գում բանվորը Փարբիկայի վրա արդին չի նայում
վորպես բանափառ վրա, այլ Փարբիկան ընդունում և

իրրի իր սրտին մոտիկ ու հարազատ գործ, վորի
վարդացման և բարելսվման հարցում չափազանց շա-
հապրաված է: Հազիվ թե կարիք լինի ապացուցե-
լու, վոր բանվորների այդ նոր վերաբերմունքը գե-
ղի ձեռնարկությունը, բանվորների դեսի ձեռնար-
կությունը տածած այդ մոտիկության զգացումը խո-
շոր շարժիչ են հանդիսանում մեր ամբողջ արդյունա-
գործության համար: Այդ հանգամանքով պիտի բացա-
տրի այն փաստը, վոր տեխնիկայի ու արտադրության
ասպարիզում որեցոր աճում և բանվոր գյուտա-
րարների թիվը:

Յերկրորդ, այն հանգամանքը, վոր մեզանում ար-
դյունավործությունից ստացված յեկամուտաները գնում
են վնչ թե հարսացնելու մասնավոր անհատներին, այլ
արդյունավործությունն ավելի ևս ընդլայնելու, բանվոր
գտասակարգի նյութական ու կուտարական զրությունը
բարելավելու, եժանացնելու բանվորներին ու գյուղա-
ցիներին անհրաժեշտ արդյունավործական ապրանք-
ները, այսինքն նորից յեկամուտներով բարելավելու
աշխատավոր մասամաների նյութական զրությունը:
Կապիտալիստը չի կարող իր յեկամուտները գարձնել
բանվոր գտասակարգի բարեկեցությունը բարձրացնե-
լու միջոց: Կապիտալիստն ապրում և իր ոգուտների
համար, հակառակ պեղքում նա չի կարող կապի-
տալիստ լինել: Նա ոգուտ և ստանում նրա հա-
մար, վորպես այդ ոգուտը գարձնի հավելյալ կա-
պիտալ և տեղափոխ այն ավելի նվազ զարգա-
ցած ու կապիտալների կարիք ունեցող յերկրները
նոր ոգուտ և տիեզի խոշոր առուտ ստանալու նպա-
տակով: Այդ ձևով կապիտալները չյուրիստին Ա-

մերիկայից հոսում էն գեղի Զինաստան, Ինգոնեղիա, Հարավային Ամերիկա ու Յելլուզա, Ֆրանսիայից՝ գեղի Փրանսիական գաղութները, Անգլիայից՝ գեղի անգլիական գաղութները: Մեզանում բոլորովին այլ և պատկերը, վորովհետեւ մենք գաղութային քաղաքականություն չենք վարում և չենք ընդունում: Մեզանում արդյունագործությունից ստացված յեկամուտները մնում են յերկրում՝ արդյունագործության հետագա ընդլայնման, բանվորների զրությունը բարելավելու, ներքին շուկայի, դրանց թվում նաև գյուղացիական շուկայի տարրությունը բարձրացնելու, արդյունագործական արդյունքներն եժանացնելու համար: Մեզանում արդյունագործությունից ստացված յեկամուտների տասը տոկոսը զրութազրկում և բանվոր գասակարգի կենցաղը բարելավելու վրա: Բանվորների զրամական աշխատավարձի 13 տոկոսը պետության հաշվին զործադրվում և բանվոր զասակարգի ապահովագրության վրա (գա տարեկան կազմում և 800 միլիոն ռուբ. ավելի մի զումար): Յեկամուտների մի փորոշ մասը (այժմ՝ չեմ կարող ասել թե հատկապես վճռ մասը) զործադրվում և բանվորների կուլտուրական կարիքների համար, նրանց արձակուրդների ծախսերի և ֆաբրիկային ու զործարանային ուսումնական պետքերի համար: Այդ յեկամուտների բավական խոշոր մասը (եթև չեմ կարող այժմ ասել, թե հատկապես վճռ մասը) զործադրվում և բանվորների զրամական աշխատավարձը բարձրացնելու վրա: Արդյունագործության յեկամուտների մնացած մասը զործադրվում և արդյունագործության հետագա ընդարձակման, զործարանների վերանորոգության, նոր զործարաններ շինելու և, վերջապես, ար-

դյունագործական ասլրանքներն եժանացնելու վրա: Մեր ամբողջ արդյունագործության համար այս հանգամանքների նոկայական արժնքն այն և, վոր ա) նրանք հեշտացնում են գյուղատնտեսությունը ինդուստրիային մոռեցնելու և քաղաքի միջնական գործելու վործը և բ) նըպաստում են ներքին թե քաղաքային և թե գյուղական շուկայի տարրության լայնացմանը, սահեղելով արդպիսով ինդուստրիայի հետագա ծավալման անընդհանուր աճող բազա:

Վերջապես այն փաստը, վոր արդյունագործության ազգայնացումը հեշտացնում է ընդհանուր առմամբ՝ արդյունագործական ամբողջ անտեսությունը վորոշ պլանով վարելու վործը: Մեր արդյունագործության այդ սովորությունները՝ այդ շարժիչները կարող են արդյոք լինել մշտական զործող ֆակտորներ: Այն, նրանք կլինեն մշտական զործոն ստիմուլներ ու շարժիչներ: Վորքան ավելի զարգանա մեր ինդուստրիան, այնքան ավելի կամքի նաև այդ զործոնների ուժն ու արժեքը:

Յ ո թ ն ե ր ո ր գ հ ա ր ց .— Ի՞նչ աստիճան կարող և համագործակցել ԽՍՀՄ այլ յերկրների կապիտալիստական արդյունագործությանը:

Պ ա տ ա ս ի ա ն .— Ակների և, վոր խոսքը վերաբերում և ժամանակավոր համաձայնություններին կապիտալիստական պետությունների հետ՝ արդյունագործության, առևտիրի բնագավառներում, գուցե և դիմանագիտական նարարերությունների բնագավառում Յես կարծում եմ, վոր հակագիր յերկու սիստեմների ներկայությունը — կապիտալիստական սիստեմի

և սոցիալիստական սխառեմների — չի բացասաւմ նման համաձայնությունների հնարավորությունը: Յես կարծում եմ, վոր նման համաձայնություններ հնարավոր են և նպատակահարմար՝ խաղաղ զարգացման պայմաններում: Արտահանությունը և ներմուծումը ամենահարմար մէջոցներն են նման համաձայնությունների համար: Մեզ հարկավոր և սարքավորում, զավորների համար հում նյութ (որինակ բամբակ) և կիսամշակված նյութեր (մնալաղին և այլն): Իսկ կապիտալիստները կարիք ունեն այդ ապրանքները սպասելու: Ահա ձեզ հող համաձայնությունների համար: Կապիտալիստներին պետք և նավթ, փայտ և հացամթերքներ, իսկ մեզ հարկավոր և ծախել այդ ապրանքները: Ահա մի հիմք ևս համաձայնությունների համար: Մեզ հարկավոր են վարկեր, իսկ կապիտալիստներին՝ բավ տոկոսներ այդ վարկերից: Ահա ձեզ ելի մի հիմք համաձայնությունների համար՝ արգեն վարկային գծով, ըստ վորում հայտնի յե, վոր խորհրդային սրբանները ամենահաճախապահ պարտք վճարողներն են:

Նույնը կարելի յե ասել և գիլվանագիտական բը-նագավառի մասին: Մենք վարում ենք խաղաղության քաղաքականություն: Մենք պատրաստ ենք կապիտա-լիստական պետությունների հետ դաշինքներ հնքել՝ փոխադարձարար իրար վրա չհարձակվելու մասին: Մենք վարում ենք խաղաղության քաղաքականություն և պատրաստ ենք համաձայնության գալ զինաթա-փության վերաբերմամբ, նույնիսկ ամրողջովին վե-րացնել մշտական զորք ունենալը, վորի մասին մենք ամրող աշխարհին հայտնել ենք Զինովայի կոնֆերանսում: Ահա հող համաձայնության համար՝ զիվանագի-տական բնագավառում:

Իսկ այդ համաձայնության սահմանները: Այդ սահմանները զրվում են յերկու սխառեմների հակագը-րությամբ, վորոնց միջի տեղի յե ունենում մրցումն և կոփի: Այս շրջանակներում, այս յերկու սխառեմների թույնարած շրջանակներում, միայն այդ շրջանակնե-րում, համաձայնությունները լիովին հնարավոր են: Այդ մասին խոսում ե Գերմանիայի, Բալթիայի, Յապոնիայի և ուրիշների հետ կնքած համաձայնությունների վորձը:

Այդ համաձայնությունները պարզապես փորձեր են միայն, թե կարող են ունենալ ավելի կամ նվազ տեսկան բնույթ: Դա միայն մեզնից կախված չե: Դա կախված և նույնպես մեր կոնտրապենտներից: Դա կախված և ընդհանուր կացությունից: Պատերազմը կա-րող և տակն ու վրա անել ամեն ինչ և ամեն տեսակ համաձայնություններ: Այդ կախված և, վերջապես, հա-մաձայնության պայմաններից: Սարկական պայման-ներ մենք չենք կարող ընդունել: Մենք ունենք հա-մաձայնություն Հարբիմանի հետ, վորը շահագործում և վրաստանի մարզանեցի հանքերը: Համաձայնու-թյունը կնքված և 20 տարով: Ինչպես տեսնում եք, այնքան ել կարձ ժամանակամիջոց չե: Մենք ունենք համաձայնություն նույնպես Լենա-Գոլդֆիլդս ընկե-րության հետ, վոր Միլիբրում վորկու հանքերն և շա-հագործում: Համաձայնությունը կնքված և 30 տարով: Ավելի յերկարան մի ժամանակամիջոց: Կա, վերջա-պես, համաձայնություն Յապոնիայի հետ՝ Սախալինի նավթահանքերի և ածխահանքերի շահագործուն-համար:

Մենք կուզենայինք, վոր այս համաձայնություն-ներն ունենային ավելի կամ նվազ ամուր բնույթ: Դա

կախված է, ի հարկի, վոչ միտյն մեղանից, այլ հահ
մեր կոնսորտինաներից:

Ութ երորդ հարգ.—Վորոնք են Ռուսաս-
տանի հիմնական տարբերությունները կապիտա-
լիստական պետություններից՝ ազգային փոքրա-
մասնությունների վերաբերմամբ յեղած քաղա-
քականության հարցում:

Պատասխան.—Ըստ յերեսութին խոսքը վե-
րաբերում է ԽՍՀՄ այն ազգություններին, վորոնք
առաջ հարստահարվում եյին ցարիզի ու ռուսական
հարստահարիչ գասակարգերի կողմից, և վորոնք չունեյին
իրենց պետականությունը: Հիմնական տարբերությունն
այն է, վոր կապիտալիստական պետություններում զո-
յություն ունի ազգային ճնշում և ազգային ստրկացումն,
իսկ մեղանում՝ ԽՍՀՄ մեջ վոչնչացված է թե մեկը, և թե
մյուսը: Այստեղ, կապիտալիստական պետություննե-
րում, «առաջնակարգ» ազգությունների կողքին, արտո-
նյալ ազգությունների, «պետական» ազգությունների
կողքին գոյություն ունեն «յկրկրորդ կարգի» ազգու-
թյուններ, «վճար պետական» ազգություններ, վճար իրա-
վանափասար ազգություններ, վորոնք դրկված են այս
կամ այն և ամենից առաջ պետական իրավունքներից:
Ընդհակառակը, մեղանում՝ ԽՍՀՄ մեջ վոչնչացված են
ազգային անհավասարության, ազգային ճնշումի բոլոր
տարբերությունները: Մեղանում բոլոր ազգություններն ի-
րավանափասար են և ինքնիշխան, վորոնչեա վոշն-
չացված են առաջներում գերիշխող վելիկուուս ազգի
ազգային ու պետական բոլոր արտոնությունները: Ի
հարկի, խոսքը ազգությունների հավասարության դեկ-

լարացիաների մասին չե: Ազգերի հավասարության
մասին դեկլարացիաներ շատ կան ամեն մի բուրժուա-
կան և սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ:
Բանի կոպեկ արժեն այդ դեկլարացիաները, յերբ նը-
րանք չեն իրականանում կյանքի մեջ: Բանն այն է,
վոր վոչնչացվեն այն գասակարգերը, վորոնք հան-
դիսանում են ազգային հարստահարության հեղի-
նակը, մարմնացնող և իրավործող: Այզպիսի գասա-
կարգեր եյին մեղանում կալվածառերը և կապի-
տալիստները: Մենք տապալեցինք այդ գասակարգե-
րը և զբանով ել վոչնչացրինք ազգային հարստահա-
րության հնարավորությունը: Հենց շնորհիվ այն հան-
գամանքի, վոր մենք տապալեցինք այդ գասակար-
գերը, մեղանում իրապիս հնարավոր դարձավ աղ-
գային հավասարությունը: Հենց այդ և մեղանում կոչ-
վում ազգերի ինքնորոշման, մինչև իսկ անջատման գա-
զափարի իրավործումն: Վորովինեա մենք իրականաց-
րինք ազգերի ինքնորոշումը, այդ պատճառով ել մեկ
աշողվեց վոչնչացնել ԽՍՀՄ տարբեր ազգությունների
աշխատավոր մասսաների փոխադարձ անվտանու-
թյունը և հօժարակած սկզբունքի հիման վրա՝ համախըմ-
բել ազգությունները դաշնակից մի պետության մեջ:
Ներկայումս գոյություն ունեցող ԽՍՀՄ հետևանքը
և և արտահայտություն մեր ազգային քաղաքականու-
թյան և Միության բոլոր ազգությունների մի գաշ-
նակից պետության մեջ կամովին գաշնակցելու ար-
տահայտություն՝ Միության բոլոր ազգությունների
կողմից: Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, վոր ազ-
գային հարցում այսպիսի մի քաղաքականություն չի կա-
րող իրականանալ կապիտալիստական յերկրներում, վո-

բավհետև այնաեղ դեռ իշխանության զլուխ են կանգնած կապիտալիստները, վորոնք հանդիսանում են աղքային հարստահարության հեղինակներ և իրագործողներ: Զի կարելի, որինակ, չնշել այն փաստը, վոր ԽՍՀՄ ամենաբարձր որդանի — Խորհուրդների Կենտրոնական զլուխ կանգնած և վճչ անպատճառ մի առև նախագահ, այլ վեց նախագահ, այն վեց դաշնակից պետությունների թվի համեմատ, վորոնք միացած են ԽՍՀՄ մէջ, այդ նախագահներից մեկը ոռւս և կալինին, մեկը ուկրայնացի յիշ՝ Պետրովսկի, յերրորդը բելորուս և Զերվյակով, չորրորդը ազգայինացի յիշ՝ Մուսաբեկով, հինգերորդը թուրքմեն և Այստակով և վեցերորդը ուղբեկ և Ֆեյզուլլա Խոչայիկ: Այս փաստը հանդիսանում և մեր ազգային քաղաքականության ամենափայլուններից մեկը: Հարկ չկա ասելու, վոր բուրժուական հանրապետություններից և վճչ մեկը, վորքան նա ծայրահեղ գեմոկրատական լիներ, այդ քայլը չեր անիլ: Մինչդեռ այդ քայլը մեզ համար հանգիստում և ինքնին հասկանալի մի փաստ, վոր բըզիսում և ազգային հավասարության մեր քաղաքականությունից:

Ի՞ն ն ե ր ո ր գ հ ա ր ց .— Ամերիկյան բանվորական պարագույինները արդարացնում են իրենց պայքարը կոմմունիստների գեմ՝ յերկու հանգամանքով. 1) կոմմունիստները քայքայում են բանվորական շարժումը իրենց ֆրակցիոն կովով միությունների ներսում, իրենց հարձակումներով պրոֆինությունների վոչ բազիկալ պաշտոնատար անձանց վրա. 2) ամերիկյան կոմմունիստները կարգադրություններ ստանում են Մակլայից,

ուստի և չեն կարող լինել պրոֆմիութենական լավ կործիչներ, քանի վոր իրենց լոյալությունը դեպի ստարերկրյա կազմակերպությունը գերակառւմ և վեպի իրենց միությունն ունեցած լոյալության վերաբերմամբ: Ի՞նչպիս կարելի յի վերացնել այս գծվարությունը, վորպեսզի ամերիկյան կոմմունիստները կարողանային միասին աշխատել ամերիկյան բանվորական շարժման մյուս բջիջների հետ:

Պատասխան.— Ցես կարծում եմ, վոր ամերիկյան բանվորական լիդերների փորձերը՝ արդարացնելու իրենց կովով կոմմունիստների գեմ՝ վոչ մի քննադատության չեն զիմանում: Վոչ վոր գեռ չի ապացուցել և չի կարող ապացուցել թե կոմմունիստները քայքայում են բանվորական շարժումը: Բայց զրա փոխարեն բոլորավին ապացուցված պետք և համարել վոր կոմմունիստները ամենահավատարիմ, ամենահանգստին մարտիկներն են բանվորական շարժման գործում վողջ աշխարհում, ինչպիս նաև Ամերիկայում: Միթե փաստ չե, վոր բանվորների գործադրուների և ցույցերի ժամանակ կոմմունիստները գանվում են բանվոր դասակարգի առաջին հարցածները, մինչդեռ ոեֆորմիստ բանվորական լիդերները թաքնվում են կապիտալիստների յետել: Ի՞նչպես կարող են կոմմունիստները չքննադատել ոեֆորմիստ բանվորական լիդերների վախկուությունը և ոեակցիոնությունը: Միթե պարզ չե, վոր այլպիսի քննադատությունը կարող և միայն աշխատացնել և ամբազնգել բանվորական շարժումը: Ճշմարիտ և, նման քննադատությունը խորտակում և բանվորական սեակցիոն լիդերների հեղինակությունը: Այս-

տեղ զարմանալու թշնչ կա: Թող բանվորական սեակցիոն լիդերները պատասխանեն հակաքննադատությամբ, վոչ թե կոմմունիստներին գուրու շվլրտելով պրոֆմիություններից: Յես կարծում եմ, վոր Ամերիկայի բանվորական շարժումը, յեթե նա ուզում է հետագայում ևս ապրել ու զարգանալ չի կարող յուլա դնալ առանց կարծիքների և հոսանքների պայքարի՝ պրոֆմիությունների ներսում: Յես կարծում եմ, վոր պրոֆմիությունների ներսում կարծիքների և հոսանքների պայքարը, ուսակցիոն լիդերների քննադատությունը և այլն ավելի և ավելի ծավալ կատանան, չնայած ուժումիստ բանվորական լիդերների ընդդիմության: Խոկ Ամերիկայի բանվոր դասակարգի համար բացարձակապես անհրաժեշտ է կարծիքների նման պայքար, նման քննադատություն, վորպեսզի նա կարողանա ընտրություն կատարել զանազան հոսանքների միջև և վերջապես ինքնորոշվի, վորպես ինքնորություն կազմակերպված ուժ՝ ամերիկյան հասարակության մեջ: Ամերիկյան ուժումիստ լիդերների գանգատները կոմմունիստներից՝ վկայում են միայն, վոր նրանք վստահ չեն իրենց իրավացությանը և զգում են, վոր իրենց զիրքն ամուր չեն գրա համար ել վախենում են քննադատությունից, վորպես ժանատախայց: Զարմանալին այն ե, վոր ամերիկյան բանվորական լիդերները տարրական գեմովլրատիայի ավելի վճռական թշնամիներ են, քան թե շատերը բութուական Ամերիկայում:

Բոլորովին ճիշտ չե այն պնդումը, թե ամերիկյան կոմմունիստները աշխատում են «Մուկայի կարգադրություններով»: Դուք չեք զտնի աշխարհում այնպիսի կոմմունիստներ, վորոնք համաձայնվեյն

զորձել զրաի «կարգադրությամբ» ընդդեմ իրենց համազմունիքների, հակասակ կացության պահանջների: Խոկ յեթե նույնիսկ նման կոմմունիստներ գոյություն ունենային վորեւ տեղ, կոպեկ անզամ չեյին արժի: Կոմմունիստները ամենահանդուգն և ամենաանվախ մարդիկն են: Նրանք կավում են ծով թշնամիների գեմ: Կոմմունիստների արժեքը այն է, վոր նրանք կարողանում են համասորեն պաշտպանել իրենց համազմունքները: Ուստի աարորինակ և խոսել ամերիկյան կոմմունիստների մասին, վորպես մարդկանց, վորոնք չունեն իրենց համազմունքները և լոկ ընդունակ են զորձել զրաի կարգադրությամբ: Բանվորական լիդերների պնդման մեջ կա միայն մի բան ճշմարիտ: այդ այն է, վոր ամերիկյան կոմմունիստները մտնում են կոմմունիստների միջազգային կազմակերպության մեջ և ժամանակ առ ժամանակ խորհրդակցում այդ կազմակերպության կենտրոնի հետ՝ այս կամ այն խնդրի վերաբերմամբ: Այստեղ թշնչ վաս բան կա: Միթե ամերիկյան բանվորական լիդերները զեմ են միջազգային բանվորական կենտրոնի կազմակերպության: Ճիշտ ե, նրանք չեն մտնում Ամստերդամի կազմի մեջ: Սակայն այնտեղ չեն մտնում վոչ թե նրա համար, վոր զեմ են միջազգային բանվորական կենտրոնի, այլ վորովհետեւ նրանք Ամստերդամը համարում են չափազանց ձախ կազմակերպություն: (Ծիծալ): Ինչու կապիտալիստները կարող են կազմակերպվել միջազգային մասշտարով, խոկ բանվոր դասակարգի մի մասը չպետք է ունենա իր միջազգային կազմակերպությունը: Պարզ չե, վոր Գրինը և նրա մյուս բարեկամները Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայից՝ բամբասում են ամերիկյան

կոմմունիստներին, սարկորեն կրկնելով կապիտալիստների ասասպելները «Մոսկվայի կարգադրությունների» մասին: Կան մարդիկ զորոնք կարծում են, թե կոմմունիստական ինտերնացիոնալի անդամների բանն ու զործը Մոսկվայում նստել ու բարոր յերկրների համար զիբեկտիվներ զրեն ե: Յեվ քանի վոր կոմինտերնի կազմի մեջ մտնող յերկրները 60-ից ավելի յեն, կարգ եք յերևակայել կոմինտերնի անդամների զրությունը, զորոնք առանց քնելու, առանց ուսելու և նստաձ գիշեր-ցերեկ զրում են զերեկտիվներ այդ յերկրների համար: (Ծիծաղ): Յեվ այս զվարճալի տասապելով ամերիկան բանվորական լիգերներն ուզում են քողարկել իրենց սարսափը կոմմունիստների առջե ու ծածկել այն փաստը, վոր կոմմունիստները Ամերիկայի բանվոր դասակարգի ամենահանգույն և ամենահավատարիմ գործիչներն են:

Պատվիրակությունը հարցնում է, թե ի՞նչ յելք կա նման վիճակից: Յես կարծում եմ՝ մի յելք կա միայն—թույլատրել կարծիքների և հոսանքների պայքարը Ամերիկայի պրոֆմիտությունների ներսում, զեն շպրտել կոմմունիստներին պրոֆմիտություններից արտաքսելու ռեակցիոն քաղաքականությունը և տալ հնարավորություն բանվոր դասակարգին ազատ ընտրություն կատարելու այդ հոսանքների միջև, զորովհանե Ամերիկայում նա գեռ չի կատարել իր հովանական հերկայացուցիչները զիմած լինելին ոգնություն խնդրելու ՍԽՀՄ կոմկուսից: Դուք այս բանը կարող եք տարօրինակ համարել սակայն զա փաստ ե, վորը խոսում ե ամերիկան կոմմունիստների չափազանց մեծ փափկանկատության մասին: Սակայն ի՞նչ կլիներ, յեթե Ամերիկայի կոմկուսը ՍԽՀՄ կոմկուսի ոգնությանը զիմեր: Յես կարծում եմ, վոր ՍԽՀՄ կոմկուսը նրան իր ույժերի չափ ոգնություն ցույց կտար: Հիրավի, ի՞նչ արժեք կունենար այն կոմկուսը, վորը այն ել իշխանության զլուխ

Տառերորդ հարց.—Ուղարկված ե արդյուք ներկայումս զրամ Ամերիկայի Ամերիկայի կոմկուսի կամ կոմմունիստական «Դեյլի Ռեպորեր» թերթի ուժանգակության համար: Յեթե վոչ, ապա վորքան են մացնում ամերիկյան կոմմունիստները, զորպիս ամենամյա անդամակցական վճար լի ինտերնացիոնալի համար:

Պատասխան.—Յեթե խոսքը վերաբերում է Ամերիկայի կոմկուսի և ԱՄ ինտերնացիոնալի փոխարարություններին, ապա յես պետք է ասեմ, վոր Ամերիկայի կոմկուսը, վորպիս կոմմունիստական ինտերնացիոնալի մի մասը, պետք է վճարի կոմինտերնին անդամակցական վճարներ ճիշտ այնպիս, ինչպես կոմինտերնը, վորպիս կենարոն միջազգային կոմմունիստական շարժման, պետք է յենթագրել իր ույժերի չափ աջակցում և Ամերիկայի կոմկուսին, յերբ այդ գոնում է անհրաժեշտ: Յես կարծում եմ, սրանում վոչինչ զարմանալի և տարօրինակ բան չկա: Յեթե խոսքը վերաբերում է Ամերիկայի կոմկուսի և ՍԽՀՄ կոմկուսի փոխարարություններին, ապա յես պետք է հայտարարեմ, վոր չզիտեմ վոչ մի գեղք, յերբ ամերիկյան կոմկուսի ներկայացուցիչները զիմած լինելին ոգնություն խնդրելու ՍԽՀՄ կոմկուսից: Դուք այս բանը կարող եք տարօրինակ համարել սակայն զա փաստ ե, վորը խոսում ե ամերիկյան կոմմունիստների չափազանց մեծ փափկանկատության մասին: Սակայն ի՞նչ կլիներ, յեթե Ամերիկայի կոմկուսը ՍԽՀՄ կոմկուսի ոգնությանը զիմեր: Յես կարծում եմ, վոր ՍԽՀՄ կոմկուսը նրան իր ույժերի չափ ոգնություն ցույց կտար: Հիրավի, ի՞նչ արժեք կունենար այն կոմկուսը, վորը այն ել իշխանության զլուխ

և կանգնած, յեթե նա հրաժարվեր իր ուժերի չափ
ողնություն ցույց տալու մյուս յերկրի կոմկուսին, վո-
րը բանվում է կապիտալիզմի լծի առկ: Յես կասեցի,
վոր այդպիսի մի կոմկուս մի գրոշի արժեք չեր ու-
նենա: Դիցուք թե ամերիկյան բանվոր գասակարգը
իշխանության գլուխանցավ՝ տապալելով իր բուրժուա-
զիային: Դիցուք թե Ամերիկայի բանվոր գասակարգին,
վորը հաղթանակով և զուրս յեկել կապիտալիզմի զեմ
վարած ծանր կավում, զիմեր մի այլ յերկրի բանվոր
գասակարգը՝ նյութական ոգնության համար: Կարժղ
եր արդյոք Ամերիկայի բանվոր բասակարգը մերժել
այդ ոգնությունը: Յես կարծում եմ, վոր նա անար-
գանքի սյունին կգամվեր, յեթե նա, տատանվեր ող-
նություն ցույց տալու:

Տասնմեկերսորդ հարց. — Մենք գի-
տենք, վոր մի քանի լավ կոմմունիստներ այն-
քան ել համաձայն չեն կոմկուսի պահանջների
հետ, վոր բոլոր նոր անդամները անսաստվածներ
լինեն, վորովհետեւ ներկայաւում յետապիսական հո-
գերականությունը ճնշված է: Կարժղ եր արդյոք
կոմկուսը ապագայում չեղոք լինել կրօնի վերա-
բերած, վորը ամբողջովին պաշտպաներ գիտու-
թյունը իր ամբողջությամբ է հակառակ չկանգներ
կոմմունիզմին: Կարժղ ելիք գուք ապագայում
թույլ տալ կուսակցության անդամներին կրօնա-
կան համոզմունքներ ունենալու, յեթե վերջիններս
հակառակ չեն կուսակցական լոյալությանը:

Պատասխան. — Այս հարցում մի քանի անձը-
տություններ կան: Նախ, յես չգիտեմ այնպիսի «լավ
կոմմունիստներ», վորոնց մասին խոսում և այսակ

պատավիրակությունը: Հազիվ թե այդպիսի կոմմու-
նիստներ գոյություն ունենան բնության միջ:
Յերկրորդ, յես պետք է հայտարարեմ, վոր, խո-
սնելով ձեականորեն, մեզ մոտ, կուսակցության մեջ ան-
դամներ ընդունելու այդպիսի պայմաններ չկան, վո-
րոնք պահանջելին թեկնածուից կամ կուսակցության
անդամից պարատպիր անսաստվածություն: Կուսակցու-
թյան մեջ ընդունվելու մեր պայմաններն են՝ ընդու-
նել կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը,
անպայման յենթարկվել կուսակցության և նրա մար-
մինների վորոշումներին, անդամակցական վճարները,
կուսակցության կազմակերպություններից մեկի մեջ
մտնելը:

Պատվիրակներից մեկը. — Եսա հաճախ յես
կարգում եմ, թե կուսակցությունից հեռացնում են
նրա համար, վոր հավատում են աստծուն:

Ստալին. — Յես կարող եմ կրկնել արդեն ասած-
ներս կուսակցության մեջ ընդունելու պայմանների
մասին: Այլ պայմաններ մեզ մոտ գոյություն չունեն: Արդյոք սա նշանակնելու ե, թե կուսակցությունը չեղոք
և կրօնի վերաբերմամբ: Վաչ, չի նշանակում: Մենք
պրոպագանդ ենք մղում և պիտի մղենք կրօնական
նախապաշտպունքների գեմ: Յերկրի որենսուրությունն
այնպես ե, վոր յուրաքանչյուր քաղաքացի իրավունք
ունի հավատալ՝ ինչ կրօնի ուղում ե: Սա յուրաքան-
չյուրի խղճի գործն ե: Հենց գրա համար ել մենք բա-
ժանեցինք յեկեղեցին պիտությունից: Սակայն անց-
կացնելով յեկեղեցու բաժանումը պիտությունից և հայ-
տարարելով կրօնի ապատություն, մենք միաժամանակ
յուրաքանչյուր քաղաքացու վեկապահեցինք իրավունք

կովել՝ համողելու, պրոպագանդայի և ազիտացիայի միջոցով՝ այս կամ այն կրոնի գեմ, ամեն տեսակ կրոնի դեմ: Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնի վերաբերմամբ: Նա հակակրոնական պրոպագանդ և մղում բարոր և ամեն տեսակ կրոնական նախապաշտամունքների գեմ, վորովհետեւ նա պաշտպանում է գիտությունը, իսկ կրոնական նախապաշտամունքները գնում են ընդդեմ զիտության, վորովհետեւ ամեն մի կրոն գիտությանը հակազիր մի քան և: Այսպիսի գիտքեր, ինչպիսին յեղակ Ամերիկայում, վորուեղ վերջերս դատապարտեցին դարվինիստներին, մեղ մոտ լինել չեն կարող, վորովհետեւ կուսակցությունը զիտությունն ամեն կերպ պաշտպանելու քաղաքանություն և վարում: Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնական նախապաշտամունքների նկատմամբ: Նա պրոպագանդ պիտի մղի այդ նախապաշտամունքների գեմ, վորովհետեւ դա՝ յետազիմական հոգեսրականության ազգեցությունը խափանելու ամենալավ միջոցներից մեկն և, այն հոգեսրականության, վորը պաշտպանում և շահագործող դասակարգերին և քարոզում և հանգանգվել այդ դասակարգերին: Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնական այդ նախապաշտամունքները կրողների՝ յետազիմական հոգեսրականության վերաբերմամբ, վորը թունավորում և աշխատավոր զանգվածների՝ գիտակցությունը: Ճնշել ենք արտյով յետազիմական հոգեսրականությանը: Այն, ճնշել ենք: Դժբախտությունը միայն նրանում և, վոր նա տակավին ամբողջությամբ լուծարքի չի յենթարկել: Հակակրոնական պրոպագանդան հանդիսանում և այն միջոցը, վորը պիտի և

մինչև վախճան հասցնի յեղատիմական հոգեսրականության լուծարքի գործը: Ենուամ են գեղքեր, յերբ կուսակցության անգամներից մեկն ու մեկը յերբեմն խանգարում և հակակրոնական պրոպագանդի լուրջ զարգացմանը: Յեթե կուսակցությունից այդպիսի անգամներին հեռացնում են, շատ լավ են անում, վորովհետեւ այդպիսի «կոմմունիստները» աել չունեն մեր կուսակցության մեջ:

Տասներկույթուրդ հարց. — Կարմղ երպյուք համաստակերպով բնույթագիրը ապագան մոտ լինենց կրոնականությունը, վոր փորձում և սուհղձել կոմմունիզմը:

Պատասխան. — Կոմմունիստական հասարակության ընդհանուր բնույթագիրը ավել են Մարքսը, Ենուագիրը և Լենինը իրենց աշխատությունների մեջ: Յեթե հակիրճ ձեռվ վորոշելու լինենք կոմմունիստական հասարակության կազմը, կասեմ, վոր սա լինելու յեմի այնպիսի հասարակություն, վորակեց ա) չի կարող վոյալ վոյուն ունենալ արտագրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականություն, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն. բ) վորակեց չեն լինի զասակարգեր և պետական իշխանություն, այլ կլինին ինդուստրիալի ու գյուղատնտեսության աշխատավորներ՝ տնտեսապես կասավարվող, վորակեց աշխատավորների ազատ ասուցիացիա. գ) վորակեց հակասություններ չեն լինի քաղաքի ու գյուղի, ինդուստրիայի ու գյուղատնտեսության միջև. դ) վորակեց մթերքները կրաշնիկեն ֆրանսիական հին կոմմունիստների սկզբունքի համեմատ՝ «յուրաքանչյուրից ըստ

ընդունակությունների, յուրաքանչյուրին բատ պահանջների», յի) վորակ գիտությունը և արվեստը կղզանը այնպիսի պայմաններում, վորոնք միանդամայն բավարար են նրանց լիովին ծաղկման համար. զ) վորակ մի կտոր հացի հապուց և «աշխարհի հզորներին» հարմարվելու անհրաժեշտությունից աղաս անհատը կղանատ իրապես աղաս և այն, և այն: Պարզ ե, վորոնք տակավին հեռու յենք այդպիսի հասարակությունից:

Ինչ վերաբերում է միջազգային պայմաններին, վորոնք անհրաժեշտ են կոմմունիստական հասարակության լիակատար հազթանակի համար, կասեմ, վոր նրանք կղասափորվեն և կաձն կապիտալիստական յերկրներում բանվոր դասակարգի հեղափոխուկան բանկումների ու հեղափոխական ճգնաժամերի զարգացման համեմատ: Չի կարելի գործը պատկերացնել այնպես, թե իրը մի յերկրի կամ մի քանի յերկրների բանվոր դասակարգը կերթա գեղի սոցիալիզմը և գեռ ել ավելին, գեղի կոմմունիզմը, իսկ մյուս յերկրների կապիտալիստաներն այդ բանին կվերաբերվեն անտարբերությամբ և ձեռները ծալած կնոտեն: Ավելի և չի կարելի յերեսկայիլ, թե կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը կհամաձայնի լինել պարապ հանգիստ սոցիալիզմի հազթական զարգացմանը այս կամ այն յերկրում: Իրապես կապիտալիստաները կանեն իրենցից կախված ամեն բան, վորպեսզի խեղգեն այդպիսի յերկրները: Իրապես, այս կամ այն յերկրում գեղի սոցիալիզմը, մանավանդ գեղի կոմմունիզմը տանող ամեն մի լուրջ քայլ անխուսափելիորեն տեղի կունենա կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի անդիմապրելի

արթասրառության զուգընթաց, վորը ձգտելու յե այդ յերկրներում ձեռք բերել գիլտասառը և հիմնել սոցիալիզմ: Այսպիսով միջազգային հեղափոխության հետագա զարգացման ընթացքում կառաջանա—կկազմվի համաշխարհային մասշտաբով՝ յերկու կենտրոն, սոցիալիստական կենտրոն, վոր գեղի ինքը կքաշի սոցիալիզմին հակամետ յերկրները, և կապիտալիստական կենտրոն, վոր գեղի ինքը կքաշի կապիտալիզմին հակամետ յերկիրները: Համաշխարհային անտեսությանը տեր դաւնալու համար՝ այդ յերկու կենտրոնների մզածպայքարը կվճռի կապիտալիզմի և կոմմունիզմի բախումն ամբողջ աշխարհում, վորովհետեւ համաշխարհային կապիտալիզմի վերջնական պարտությունը հանդիսանում և սոցիալիզմի հազթանակը համաշխարհային տընտեսության ասուլարիզում:

II.

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ
ՅԵՎ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ

ՅԵՎ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Առաջին. — Յեթև պատվիրակությունը շատ հոգնած չէ, յես կիսնդրելի ինձ թույլ տալ իմ հերթին նրան մի քանի հարցեր առալ: (Պատվիրակությունը արտահայտում է իր համաձայնությունը):

Առաջին հարց. — Ինչով ե բացատրվում թմբերիկայի բանվորների պրաֆմիությունների մեջ կազմակերպվելու փոքր առկուսը:

Կարծեմ այնտեղ մոտ 17 միլիոն ինդուստրիալ բանվորություն կա: (Պատվիրակները տեղեկացնում են, թե 18—19 միլիոն արդյունագործական բանվորներ կան): Կազմակերպված են, կարծեմ, մոտ 3 միլիոն: (Պատվիրակները տեղեկացնում են, թե Աշխատանքի ամերիկյան ֆիզիրացիայի մեջ կան մոտ 3 միլիոն կազմակերպված բանվորներ, իսկ բացի գրանից, այլ միությունների մեջ կա կես միլիոն կազմակերպված բանվոր, ուրեմն ընդամենը կա յերեք ու կես միլիոն կազմակերպված բանվոր): Յես անձամբ գտնում եմ, վոր այդ շատ փոքր առկոս ե: Մեզ մոտ, ԽՍՀՄ մեջ,

պլուֆմիություններում կազմակերպված և յերկրի բոլոր պլուֆարների 90 տոկոսը: Յես կուգեյի հարցնել պատվիրակությանը, թե նա համարում է արզյաք դրական այն փաստը, վոր պլուֆմիությունների մեջ համեմատարար բանվորների քիչ տոկոսն է կազմակերպված: Արդյոք պատվիրակությունը չի կարծում, վոր այդ փաստը ցույց է տալիս ամերիկյան պրոլետարիատի թուլությունը, նրա մարտական միջոցների թուլությունը՝ կապիտալիստների գեմ անտեսական բնագավառում պայքարելիս:

Բ բ ո Փ ի.—Պրոֆմիությունների փոքրաթիվ լինելը պետք է բացատրել վոչ թե պրոֆմիութենական կազմակերպությունների մեջ գոյություն ունեցող անաջող տաքափկայալ, այլ յերկրի ընդհանուր անտեսական պայմաններով, վորոնք չեն թելադրում բանվորական ամբողջ մասսային՝ զիմելու կազմակերպության, և շնորհվ այդ անտեսական բարենպատ պայմանների՝ սղում են բանվոր դասակարգի՝ կապիտալիստների գեմ պայքարելու անհրաժեշտությունը: Ի հարկե այս պայմանները կիսումնեն, և այդ պայմանների փոփոխման զուգընթաց պրոֆմիությունները կաճեն, և վող պրոֆշարժումը կընթանա այլ ուղիսկ:

Դ ու գ լ ա ս.—Յես համաձայն ևմ նախորդ հոետորի տված բացատրությունների հետ: Դրան կտվելացնեմ, վոր նախ նկատի պետք է ունենալ այն մոմենտը, վոր վերջերս Միացյալ Պետություններում աշխատավարձը իրենց՝ կապիտալիստների կողմից՝ շատ և ավելացված: Աշխատավարձի բարձրացման այս պրոցեսը աչքի ընկալ 1917 թ., 1919 թ. և ավելի ուշ: Յեթե համեմատենք այժմ գոյություն ունեցող իրա-

կան աշխատավարձը 1911 թ. գոյություն ունեցող աշխատավարձի հետ, կտեսնենք, վոր վերջինս զգալի չափով բարձր է: Պրոֆշարժումը իր զարգացման պրոցեսի սկզբում կազմված եր և այժմ ել կազմված է ըստ ցեսի, ըստ պրոֆեսիալիստի, և պրոֆմիություններն առեղծվում են զիմավորապես վորակյալ բանվորների կողմից: Միությունների զրուխ եյին կանգնած վորոշ պարագալուխներ, վորոնք ներկայացնում եյին սահմանափակ կազմակերպություն և ձեռք եյին բերում իրենց անդամների համար լավ պայմաններ: Նրանք չունեյին զրգիչ պատճառներ՝ ընդլայնելու պրոֆմիությունների շրջանակները՝ անվորակյալ բանվորներին պրոֆմիությունների մեջ կազմակերպելու նպատակով: Բայց այդ, ամերիկյան պրոֆշարժումը ստիպված է հաշվի առնել չափաղանց լավ կազմակերպված կտպիտալիզմը, վորն իր տրամադրության տակ ունի բոլոր միջացները, վորպեսզի հակազդե բոլոր բանվորներին պրոֆմիությունների մեջ կազմակերպվելուն: Յեթե, որինակ, արեստիփիկացիայի յենթարկված մի արտադրություն իր ձեռնարկություններից մեկում հանդիպում և պրոֆմիության ուժեղ զիմապրության, նա նույնիսկ այնպիսի միջոցի յե զիմում, ինչպես այդ ձեռնարկության փակումը և աշխատանքի փոխանցումը իր մի այլ ձեռնարկության մեջ: Այդպիսով փորտակվում է պրոֆմիության ընդգինմությունը: Ամերիկյան կտպիտալիզմը ինքնարերարար ավելացնում է բանվորների աշխատավարձը, բայց անտեսական վոչ մի իշխանություն չի տալիս և հարավորություն չի տա՝ պայքարելու հոգուտ բանվորի կյանքի անտեսական բարգորման: Մյուս շատ կարենը հանգամանքը Ամե-

րիկայում այն ե, վոր կապիտալիստներն իրար դեմ եղ զրգում տարրեր ազգության պատկանող բանվորներին: Մեծ մասամբ անվորակ բանվորները Յեփոպայից գաղթած բանվորներն են, կամ վերջերս նեղր բանվորները: Այս պառակտումն ըստ ազգությունների առաջ ե գալիս նույնպես վորակյալ և անվորակ աշխատանքի տեսակետից:

Կապիտալիստները սիստեմատիկ կերպով հակամարտություն են ցանում տարրեր ազգության բանվորների մեջ անկախ նրանց աշխատանքի վորակավորումից: Վերջին 10 տարվա ընթացքում ամերիկյան կապիտալիզմը վարում ե ավելի կրթական քաղաքականություն այն տեսակետից, վոր ստեղծում ե իր պրոֆեսիոնալ այսպես կոչված կոմպանիական միությունները: Նա բանվորներին զրավում ե դեպի իր ձեռնարկության աշխատանքը, շահագրգուռմ ե բանվորներին այդ ձեռնարկության հասույթներով և այլն: Ամերիկյան կապիտալիզմը տեսնենց ունի նորիգոնական բաժանումը փոխարինել ուղղանայաց բաժանումով, այսինքն, բաժան-բաժան անել բանվոր գառակարգը՝ զրավելով և շահագրգուելով նրան դեպի կապիտալիզմի շահերը:

Կոյլ.—Յես հարցին մատենում եմ վոչ թեորիայի, այլ պրաքիլայի տեսակետից: Ճշմարիտ ե, բանվորներին լավագույն ե կազմակերպել լավ ժամանակներում, բայց բանն այն ե, վոր Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի վիճակագրությունը ցույց է տալիս, վոր Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան աստիճանաբար կորցնում է անվորակ բանվորներին և իր կազմի մեջ ավելացնում վորակյալ բանվորների թիվը: Այզպիսով

Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան ուզում է լինել և աստիճանաբար զառնում է մի կազմակերպություն, վորն իր կազմի մեջ ունի գլխավորապես վորակյալ բանվորներ: Ամերիկյան պրոֆեսսիոնալ շարժումը զրեթե չի ընդգրկում անվորակ բանվորներին: Արդյունագործության խոշոր ճյուղեր չեն մտնում պրոֆերությունների մեջ: Արդյունագործության այդ խոշոր ճյուղերից միայն ածուխի և յերկաթուղային արդյունագործության բանվորներն են վորոշ չափով ետղմակերպված, մինչդեռ ածուխի արդյունաբերության մեջ աշխատում են 65 տոկոս անկազմակերպ բանվորներ: Նման արդյունագործական ճյուղերի բանվորները, ինչպես պողպատի, ուստինի և ավտոմոբիլի, բոլորավին չեն կազմակերպված պրոֆերության մեջ: Կան մի շարք պրոֆեսսիոնալ կազմակերպություններ՝ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայից զուրս, վորոնք աշխատում են կազմակերպել անվորակ և քիչ վորակիված բանվորներին: Ինչ վերաբերում է Աշխատանքի ամիրիկյան ֆեդերացիայի պարագաների գիրքին, որինակ նրանցից մեկը՝ մետաղագործների պրոֆերության նախագահը բանությունին անկեղծ կերպով հայտաբարեց, թե չի ուզում իր միության մեջ գրավել անվորակ բանվորներին: Պրոֆմիությունների պարագաների վրա թյուն այն ե, վոր ստեղծվել ե պարագաներին կատար կատար, վորը կազմված է մի քանի տասնակ անձերից, վորոնք ստանում են խոշոր ոսճիկներ՝ մինչև 10 և ավելի հազար զոլլար տարեկան: Ստեղծվել ե մի կաստա, ուր թափանցելը չափազանց գժվար ե:

Դունն.—Ստալինի տված հարցը դրված է անար-

գար, վրուցինուել յեթե նրա յերկրում բանվորների 90
տոկոսը կազմակերպված և պրոֆմիություններում,
պիտի նկատի ունենալ, վոր այստեղ իշխանությունը
պատկանում է բանվոր դասակարգին, մինչդեռ կապի-
տալիստական յերկրներում բանվոր դասակարգը հան-
դիսանում է հարստանարկված դասակարգ, և բուր-
ժուազիան ամեն միջոց ձեռք և տանում, վորպեսզե
հնարավորություն չտա բանվորներին կազմակերպ-
վելու պրոֆմիությունների մեջ: Բացի այդ, այն-
տեղ գոյություն ունեն սեակցիոն պրոֆմիություննե-
ր՝ սեակցիոն գեկավարներով: Ամերիկայում գոյու-
թյուն ունեցող պայմաններում գմբար և բանվորների
զինում նստեցնել պրոֆեսսիոնալ միությունների գա-
զափարն ինքնին: Դա յէ պատճառ հանդիսանում այն
հանգամանքի, վոր Ամերիկայում այնքան քիչ են տա-
րածված պրոֆմիությունները:

Ստալին.—Համաձայն եւ արդյոք վերջին ճառա-
խոսը նախընթաց ճառախոսի հետ, վոր Ամերիկայի
բանվորական շարժման վորոշ լիգերներ իրենք են աշ-
խատում սահմանափակել պրոֆեսսիոնալ շարժումը:

Դռնն. — Համաձայն եմ:

Ստալին.—Յես չեյի կամենա վոչ վորի վիրա-
փորած լինել: Յես միայն ուզում եյի պարզել ինձ հա-
մար գործերի գոյության տարբերությունն Ամերիկա-
յում և ՍԽՀՄ մեջ: Յեթե յես վորեն մեկին վիրափ-
որեցի, ներողություն եմ ինպում: (Պատվիրակների
մեջ ծիծաղ):

Դռնն. — Յես բնակ վիրափորված չեմ:

Ստալին.—Արդյոք Ամերիկայում գոյություն
ունի բանվորների պետական ապահովագրություն:

Պատվիրակներից մեկը. — Ամերիկայում
չկա բանվորների պետական ապահովագրության սիս-
տեմ:

Կոյլ. — Ամերիկայուն նահանգներից մեծ մասում
գոյություն ունի կոմպենսացիա՝ զժբախտության գեղ-
քերում, ըստ այդմ, կոմպենսացիան վճարվում է կարց-
րուծ աշխատունակության 30 տոկոսի չափով:

Ստալին. — Ամերիկայում գոյություն ունի գոր-
ծազրկության ապահովագրություն:

Պատվիրակներից մեջ. — Վան Գոնդը,
վոր կազմվում եւ աշխատազրկությունն տպահովագրելու
համար, կարող երավաբարություն տալ բոլոր նահանգ-
ների գործազրկներից միայն 80—100 հազար մարդու:

Կոյլ. — Ապահովագրությունը (մեջ պետական)՝
գոյություն ունի ինպուտաբիալ զժբախտ գեղքերի հա-
մար, այսինքն այն գեղքերի, վոր տեղի յեն ունենում
արտազրական աշխատանքների միջոցին: Սակայն հի-
վանդության և ծերության հետեւնքով տառչացած
հաշմությունը վճէ մի կերպ չի ապահովագրվում: Ապա-
հովագրական ֆոնդը կազմվում է բանվորների կատա-
րած մուծումներից:

Դա նշանակում եւ ապահովագրության ֆոնդի
այդ ամբողջ գումարը մացնում են իրենք բանվոր
ները, վորովհետեւ յեթե բանվորներն իրենք չստեղծե-
լին այդ ֆոնդը, նրանք կստանային բարձր հավելումն,
իսկ վորովհետեւ այդ ֆոնդը համաձայնեցրած և լինում
բանվորների ու գործատերերի միջև, բանվորներն ըս-
տանում են պակաս հավելումն, և հենց այդ ել կազմում
և ֆոնդի ամբողջ գումարը: Գործատերերը փաստորեն
մացնում են ֆոնդի մի չնչին մասը՝ մոտ 10 տոկոսը:

Ստալին.—Յես կարծում եմ, վոր ընկերներից համար հետաքրքիր կինիր, յեթե յես հազորդիմ նրանց, վոր մեզ մոտ կիշտ՝ մեջ բանվարների ապահովագրության համար պետության կողմից արվում և տարեկան 800 միլ. բուրլուց ավելի։ Ավելորդ չելինի տսեր վոր արդյունագործության բոլոր ճյուղերում բանվորները՝ բացի սովորական դրամական աշխատավարձից՝ ստանում են նաև իրենց աշխատավարձի մոտ մի յերրորդի չափ՝ ապահովագրության, կենցազի բարելավման, կուլտուրական և այլ կարիքների համար։

Յ ե ր կ ը ո ր գ հ ա ր ց. — Ի՞նչով բացառել հատուկ մասսայական բանվորական կուսակցության բացակայությունը՝ Հյուսիս-Ամերիկան Միացյալ Պետություններում։

Ամերիկայում բուրժուազիան ունի յերկու ամբողջ կուսակցություն—հանրապետական և գենուլիատական, իսկ Ամերիկայի բանվորները չունեն իրենց մասսայական կուսակցությունը։ Արդյոք ընկերները չեն ընդունում, վոր իրենց մասսայական կուսակցության բացակայությունը, թեկուզ այնպիսին, ինչպիսին Անգլիայումն և (Լեյբուր Պարտի), թուրանցում և բանվոր դասակարգի ույժը՝ իր քաղաքական կուսակցության կապիտալիստների գեմ։ Այսուհետեւ, ինչու Ամերիկայի բանվորական շարժման պարագաները՝ Գրինն ու մյուսները՝ վճռականորեն գեմ են արտահայտում բանվորական կուսակցություն ստեղծելու Ամերիկայում։

Բ ը ո ֆ ի. — Այն, յեղել և պարագաների այդպիսի վորոշում, թե կարիք չկա այդպիսի կուսակցու-

թյուն ստեղծելու։ Սակայն կա մի փոքրամանություն, վորը ընդունում է, թե այդպիսի կուսակցության ստեղծումը անհրաժեշտ է։ Այժմ՝ Ամերիկայում որյեկախիվ պայմաններն այնպես են, վոր, ինչպիս արդին մատնանշվեց, արհեստակցական շարժումը Միաց. Պետություններում թույլ է, իսկ արհեստակց, շարժման թույլությունը բացառվում է, իր հերթին, նրանով, վոր ըանվոր զասակարգը ստայժմ պահանջ չեղագում կազմակերպվելու և կավելու կապիտալիստների գեմ, շնորհիվ այն հանգամանքի, վոր կապիտալիստներն իրենք են բարձրացնում բանվորների աշխատավարձը և ապահովում նրանց գոհացուցիչ անտեսական դրությունը։

Ս տ ա լ ի ն. — Զե՞ վոր ապահով են գլխավորապես վորակալ բանվորները։ Այստեղ կա հակասություն։ Մի կողմից զուրս և գալիս, վոր կազմակերպվածության անհրաժեշտությունը չկա, վորովհետեւ բանվորներն ապահոված են, մյուս կողմից ստում են, թե արհեստակցական միությունների մեջ կազմակերպված են հենց ավելի ապահովածները, այսինքն վորակալ բանվորները, իսկ յերբորդ կողմից, զուրս և գալիս, վոր արհեստակցական միությունների մեջ չեն կազմակերպված հենց ամենաքիչ ապահովածները, այսինքն թույլ վորակալները, վորոնք ամենից ավելի կազմակերպվելու կարիք ունեն։ Սա յես վոչ մի կերպ հասկանալ չեմ կարողանում։

Բ ը ո ֆ ի. — Այն, այստեղ կա հակասություն, ստեղծակայն հակասական և նաև ամերիկայան իրականությունը քաղաքական և տնտեսական ահսակեաներից։

Բ ը ե ր ն ե ր. — Թեև վոչ վորակալ բանվորները

կազմակերպված չեն միություններում, նրանք ձայնի քաղաքական իրավունք ունեն: Այսպիսով՝ յեթե պատահում են դժգոհության մոմենտներ, այն ժամանակ վոչ վորակյալ բանվորները այդ մոմենտներն արտահայտում են, ոգտիւլով իրենց ձայնի քաղաքական իրավունքից: Մյուս կողմից, բանվորները, վորոնք գտնվում են պլոտմիտություններում, յեթե նրանք հանգիստում են առանձնապես ծանր ժամանակների, ոգտում են վոչ թե միությունից, այլ իրենց ձայնի քաղաքական իրավունքից: Այսպիսով պրոֆեսալնալ կազմակերպման պակասը լրացվում է ձայնի քաղաքական իրավունքով:

Ի գ ր ա յ ե լ ո. — Հիմնական գժվարություններից մեջ հանգիստում է հենց Միացյալ Պետությունների ընտրական սխառեմը: Այնողնախազահի ընտրությունների ժամանակ չի ընտրվում այն մարդք, վորն ըստում և ամբողջ յերկրի ձայների մեծամասնությունը և կամ վորեն դասակարգի ձայների մեծամասնությունը: Այնուղ ամեն մի հանանքում գոյություն ունեն ընտրական կոլեգիաներ, և ամեն մի հանանքում ձայների վորոշ քանակություն, վորը մասնակցում և նախազահի ընտրություններին: Վորպեսզի նախազահը ընտրվի, անհամեշտ և, վոր նա հավաքի ձայների 51 տոկոսը: Յեթե յերեք-չորս կուսակցություն լինեն, այն ժամանակ իրերի այնպիսի զրություն կատեղձվի, վոր վոչ վոք չի ընտրվի, և ընտրությունները կտեղափոխվեն կոնգրեսը: Ահա հենց այս ել հանգիստում և վորպես պատճառաբանությունը յերբորդ կուսակցությունը ստեղծելու դեմ: Յերբորդ կուսակցություն ստեղծելու հակառակորդները պատճ-

ռարանում են այսպես. յերբորդ թեկնածու մի տուաջագրեք այն պատճառով, վոր գրանով գուք բաժանութաժան կանեք աղատական կուսակցության ձայների թիվը և հնարավորություն չեք տա՛ աղատական կուսակցությանը՝ ընտրելու իր թեկնածուին:

Ս ա տ լ ի ն. — Այսուամենայնիվ սենատոր Լաֆուետը ժամանակին ստեղծեց յերբորդ բուրժուական կուսակցությունը: Դուքս ե գալիս, վոր յերբորդ կուսակցությունը չի կարող բաժան-բաժան անել ձայները, յեթե նա հանգիստում և բուրժուական կուսակցություն, սակայն կարող ե բաժան-բաժան անել ձայները, յեթե նա բանվորական կուսակցություն լինի:

Դ ե վ ի ո. — Եաթիկին հսկուորի կողմից մատնանըշված փասալ յես հիմնական փասալ չեմ համարում: Իմ կարծիքով հիմնական փասալ հանգիստում և հետեւալը: Վորպես որինակ, յես վերցնում եմ իմ քաղաքը վորակը ապրում եմ յես. ընտրությունների կամպանիայի ժամանակ յերեան և զալիս այսինչ կուսակցության ներկայացուցիչը և արհեստակցական կազմակերպության նախազահին տալիս և վորեն պատասխանական, վորը կապ ունի ընտրական կամպանիայի հետ. հանձնում և արհեստակցական կազմակերպության նախազահին վորոշ միջոցներ, վորոնք հոգուած նրա յեն գնում, վորից հետո նա վորոշ պրեստիթ և ձեռք բերում շնորհիվ այն պաշտոնի, վորն ստանում է: Ստեղծվում է իրերի այնպիսի զրություն, վոր հենց իրենք արհեստակցական շարժման պարագաները կամ մեկ կամ մյուս բուրժուական կուսակցության կողմանկիցներն են լինում: Այդ պատճառով ել ընական ե, վոր յերբ խոսակցություններ են ծագում յերբորդ՝

բանվորական կուսակցություն ստեղծելու մասին, արհեստակցական շարժման այդ պարագլուխները վոչինչ չեն ուզում նախաձեռնել այդպիսի մի կուսակցություն ստեղծելու համար: Ինդ սմին նրանք ակնարկում են, վոր յեթե ստեղծվի յերրորդ կուսակցություն, ապա պառակտում կառաջանա արհեստակցական միությունների մեջ:

Դուք լսու: — Այն, վոր արհեստակցական միությունների միջ կազմակերպված են միմիայն վորակյալ բանվորները, զլխափորապես բացատրվում են նրանավ, վոր արհեստակցական միությունների միջ կազմակերպված յինելու համար պետք ե վորոշ ֆոնդ անենալ, ունենալ վորոշ ապահովություն, վարովնեակ անվամակցական վճարները շատ մեծ են, վոչ-վորակյալ բանվորները հնարավորություն չունեն բարձր անվամակցական վճար մացնելու: Բացի զրանից, վոչ-վորակյալ բանվորները մշտական սպառնալիքի տակ են գտնվում, վոր յեթե նրանք փորձեն կազմակերպվել, զործառերը նրանց հինուացնի աշխատանքից: Վոչ-վորակյալ բանվորները կազմակերպվել կարող են միմիայն վորակյալ բանվորների զործոն աջակցության գեղքում: Մեծ մասամբ նրանք այդ աջակցությունը չեն ըստանում: Այս հենց այս հանգամանքն ել հանդիսանում է հիմնական խոչընդուներից մեկը արհեստակցական միություններում վոչ-վորակյալ բանվորների կազմակերպության համար: Բանվորական մասսաների կողմից իրենց իրավունքների հիմնական պաշտպանությունը զնում ե այդ իրավունքների քաղաքական պաշտպանության գծով: Այս վրա յել յետ հիմնում եմ վոչ-վորակյալ բանվորների կազ-

մակերպության բացակայության զլխավոր պատճառը: Յես գտնում եմ, վոր պրոֆմիտությունների և քաղաքական բնագավառներում անվորակյալ բանվորների անկազմակերպության հիմնական մոմենտը տառեսական բազան և կազմում: յետ պետք ե ցույց տամամներիլյան ընտրողական սիստեմի այն առանձնաշատկությունը՝ ուզզակի ընտրությունների ժամանակ, յերբ ամեն վոր կարող ե գնալ ընտրողական ժողովի և հայտարարել իրեն գեմոկրատ կամ հանրապետական ու մասնակցել քիարկությանը: Յես համոզված եմ, վոր Հոմակերսը չեր կարող պահել բանվորներին վոչքաղաքական ծրագրի ազգեցության տակ յեթե նա չունենար ուզզակի քիարկության վերաբերմամբ այդ արգումենտը: Նա միշտ ասում եր բանվորներին, վոր յեթե նրանք ուզում են քաղաքականորեն զործել կարող են զնալ զոյտություն ունեցող յերկու կուսակցությունների մոտ և խլել այսակ այս կամ այն պաշտոնը ու ձեռք բերել իրենց համար հեղինակություն: Այդ արգումենտի ողնությամբ Հոմակերսին հաջողվում եր հեռու պահել բանվորներին կազմակերպվելու գաղափարից և բանվորական կուսակցություն ստեղծելուց:

Յերբորդ հարցու: — Ինչ պ բացակայությունը Սլովակիա ամենաչելու հարցում Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի պարագաների հանդիսանում էն անդիսական, քան շատերը բուռն ու առաջարկություն են առաջարկություն իրենց իրավունքների համար հանդիսանում էն անդիսական, քան

Բաշտի բացատրել վոր այնպիսի բուրժուաներ, վորպիսիք են Բորան և ուրիշները, արտահայտվում են հոգուտ

ՍԽՀՄ ճանաչելու, իսկ Ամերիկայի բանվորական շարժման լիգերները՝ Հոմագելուից սկսած մինչև Գրինը՝ ամերիկանացիների առաջնահանդիպությունը են արել և շարունակում են անել առաջին բանվորական հանրապետությունը ճանաչելու դեմ, ՍԽՀՄ ճանաչելու դեմ։ Ինչո՞վ բացարձարել վոր նույնիսկ այնպիսի մի հետազիմական, վորպիսին եր ամերիկյան նախկին պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը, հնարավոր եր գանում «վողջունել» Խորհրդային Ռուսաստանը, իսկ Գրինը և Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի մյուս լիգերներն ուղարձ են լինել ավելի յետազիմական, քան կապիտալիստները։ Այս վուզրո Վիլսոնի վողջունի բնագիրը՝ ուղարկված 1918 թ. մարտին Ռուսաստանի Խորհրդադիմական պարբերության վերմանական կայսրի զորքերի խորհրդային Լենինգրադի վրա կատարած հարձակման որերին։

«Ոգտվելով Խորհրդադիմականից, յև կուզեցի մեր Միացյալ Պետությունների ժողովուրդների անունից արտահայտել ուստի ժողովրդին իմ անկեղծ համակարանքը, հասկապես այժմ, յերբ Գիրմանիսն շարժել ե իր զինված ուժերը գեպի ձեր յերկրի խորքը՝ ազատազրության պայքարը խանգարելու, նրա նվաճումները վոչնչացնելու և գիրմանական միտումներն ու սուս ժողովրդի ազատազրկումն իրականացնելու համար։ Թեև Միացյալ Պետությունների կառավարությունն այժմ ցավոք սրափի չի կարող ցույց տալ Ռուսաստանին այն անմիջական գործնական պաշտպանությունը, վոր նա ուղարձ եր ցույց տալ յև կուզեցի հավասարացնել ուստի ժողովրդին ներկա համագումարի միջոցով, վոր Միացյալ Պետությունների կառավարությունները՝

Թյունը կողաագործե լուրը հնարավորությունները՝ ապահովելու Ռուսաստանին նորից լիակատար սուվերենիական և լիակատար անկախություն իր ներքին գործերում և նրա Յեվրոպայի ու Ժամանակակից մարդկության կյանքում ունեցած մեծ գերի լիակատար վերականգնումն։ Միացյալ Պետությունների ժողովուրդը ի սրան համակառում և ուստի ժողովրդի ձգումները՝ ընդմիջան ազատական միապետությունից և սեփական ուժերով անորինելու իր բախտը» (Տես «Պրավդա» № 50, 1918 թ. մարտ 16):

Կարելի՞ յէ արդյոք նորմալ համարել, վոր Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի լիգերներն ուղարձ են լինել ավելի յետազիմական, քան յետազիմ վիլսոնը։

Բ ը ո Փ ի. — Յես չեմ կարող ճիշտ բացարձել պատճառները, բայց գանում եմ, վոր հենց այնպես, ինչպես Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան չի մանում Ամստերդամի Ինտերնացիոնալի մեջ, նույն պատճառներով ել Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի լիգերները կանգնած են Խորհրդային Ռուսաստանը չը ճանաչելու անսականի վրա։ Տարբերությունը ամերիկյան բանվորների յուրահասառակ վիլխանգայության և ամերիկյան ու յեվրոպական բանվորների միջն զոյտմյուն ունեցող անտեսական առարկերության մեջ ե։

Ս տ ա լ ի ն. — Բայց Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի լիգերները չեն առարկում, վորքան ինձ հայանի յե, իտալիայի և Անաստանի ճանաչման դեմ, ուր իշխում են ֆաշիստները։

Բ ը ո Փ ի. — Ցույց տալով, վորպես նմուշ, իտալիան և Անաստանը, ուր գոյություն ունեն ֆաշիստական կառավարություններ, զուք հենց զրանով բա-

ցարում եք ԱԽԾՄ Ամերիկայի կողմից չճանաչելու պատճառը։ Այդ վոչ բարյացակամ վերաբերմունքը դեպի ԱԽԾՄ բացարձում ե այն անախորժություններով փորոնք գոյություն ունեն ամերիկյան պրոֆշարժման լիդերների և իրենց սեփական կոմմունիստների միջև։

Դռւնն.—Այն պատճառը, վոր առաջ բերավ նախորդ ճանախոսը, թե ի՞նչպես կարող են նրանք ճանաչել ԽՍՀՄ, յերբ իրենք իրենց սեփական կոմմունիստների հետ լավ հարաբերության մեջ չեն, համոզեցուցիչ չե, վորովհետեւ ԽՍՀՄ չճանաչելու քարոզը տարվում եր նրանց կողմից զեօնս ամերիկյան կոմկուսի կազմակերպվելուց առաջ։ Հիմնական պատճառն այն է, վոր Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի լիդերներն առնասարակ գեմ են այն ամենին, ինչ վոր կարող է նման լինել սոցիալիզմին։ Յեվ այդ խնդրում նրանց արամագրում են կապիտալիստները, վորոնք ունեն «Ազգային Քաղաքացիական Աստղիացիա» կոչվող կազմակերպություն, վորը ջանում է ամեն տեսակ միջոցներով ամերիկյան հասարակությանը արամագրել ընդուն սոցիալիզմի, ինչպիսին և լինի այն։ Այդ կազմակերպությունը դուրս յեկավ Այվի-Լիի տեսակետների դեմ, վորը դուրս յեկավ հոգուած Ամերիկայի և ԽՍՀՄ առևտրական հարաբերությունների զարգացման։ Այդ կազմակերպության պարագուխներն ասում ենին։ — մենք ի՞նչպես կարող ենք հսկել մեր բանվարդակարգի մեջ տիրող կարգերը, յերբ ազատամիտներն սկսում են այդպիսի խոսակցություններ առաջ բերել։ «Ազգային Քաղաքացիական Աստղիացիան» կապիտալիստների մի խմբակի կազմակերպություն ե,

վորի մեջ նրանք խոշոր զումար են մացըևեւ, և վորը զեկավարում են։ Պետք ե նշել, վոր այդ հետազիմական աստոցիացիայում Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի փոխնախագահ Մատյան Վոլքը հանդիսանում է նույնպես փոխնախագահ։

Բրոֆի. — Այն պատճառները, վոր բերվեցին այսուղի պրոֆմիության պարագուխների յետազիմության վերաբերմամբ, հիմնական չեն. այդ հարցին պետք է ավելի խորը նայել։ Ամերիկյան պատվիրակության ներկայությունը ԽՍՀՄ մեջ հանդիսանում է ամենալավ պատասխանն ու ապացույցը ամերիկյան բանվարների մի մասի զեպի ԽՍՀՄ ունեցած համակրանքի։ Յես գտնում եմ, վոր Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի պարագուխների կարծիքը ԽՍՀՄ մասին չի տարբերվում Ամերիկյայի բանվոր զասակարգի մեծամասնության կարծիքից։ Բանվոր զասակարգի մեծամասնության գիրքը ԽՍՀՄ վերաբերմամբ բացարձում ե ԽՍՀՄ հեռավորությամբ։ Ամերիկյայի բանվոր զասակարգը շահագրգոված չե ամեն տեսակ միջազգային գործերով, իսկ բուրժուազիայի ազգեցությունը Ամերիկյայի բանվոր զասակարգի վրա ուժեղ կերպով զգացվում է հենց զեպի ԽՍՀՄ ունեցած վերաբերմունքի հարցում։





ՀՀ Ազգային գրադարան



NL0184000

25 l.

80

1

0

